ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկ Դեմոյան

Ներածություն

Մենք չենք հաղթում, մինչև CNN-ը չի հաղորդում, որ մենք հաղթում ենք:
Ջոն Շալիկաշվիլի, ամերիկյան գեներալ[1]

Տեղեկատվական անվտանգության ապահովումը ժամանակակից աշխարհում պետությունների ու ազգերի գոյապահպանման և արդյունավետ կենսագործունեության ապահովման կարևորագույն երաշխիքներից է: Դրա հիմնական տարրերից է ճիշտ կազմակերպված և լայնածավալ կիրառում ունեցող պետական քարոզչությունը՝ ուղղված տվյալ երկրի կենսական հարցերի շուրջ ձեռնտու միջազգային, ինչպես նաև ներհասարակական կարծիքի ձևավորմանը:

Այս առումով կարևորվում է տվյալ պետության տեղեկատվական համակարգի կենսագործունեության անընդհատ զարգացման և դրա դիվերսիֆիկացման ապահովումը՝ այն դարձնելով տվյալ հասարակության և պետության շահերին ու արժեհամակարգին համապատասխանող կարևոր տարր: Այս համատեքստում կարևորվում են նաև այդ համակարգն օտարամուտ տարրերից զերծ պահելը և ազգային ինքնության և ազգային ու պետական արժեքների պահպանմանը համահունչ համակարգի գործունեությունն ապահովելը[2]:

Ժամանակակից աշխարհում քարոզչության իրականացման համար կարևոր դեր և նշանակություն ունեն տեղեկատվական պատերազմների (ՏՊ) ճիշտ կազմակերպումը և իրականացումը: Ներկայումս աշխարհում ընթացող զարգացումները գալիս են վկայելու տեղեկատվական պատերազմի կարևոր նշանակության մասին՝ այն դարձնելով արտաքին և ներքին քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից մեկը:

21-րդ դարում տեղեկատվական պատերազմը դիտարկվում է որպես ժամանակակից համաշխարհային քաղաքականության հիմնական միջոցը՝ հանդիսանալով միաժամանակ քաղաքական և տնտեսական իշխանության հասնելու տիրապետող եղանակ[3]:

[1] Информационная война в Чечне. Факты. Документы. Свидетельства, ноябрь 1994-сентябрь 1996, Права человека, М., 1997, с. 398.
[2] Գ. Հարությունյան, ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2003, էջ 3:
[3] И. Панарин, Л. Панарина, Информационная война и мир, М., Олма Пресс, 2003, с. 4.

Ավելորդ չէ նշել, որ ՏՊ-ը և նրա բաղադրիչ հանդիսացող տեղեկատվական օպերացիաներն ու հոգեբանական ներգործությունը սերտորեն կապված են քարոզչության հետ:

Քարոզչությունը մարդկանց որոշակի խմբի գիտակցության, զգացմունքների և տրամադրության վրա ռազմական, տնտեսական, քաղաքական նպատակներով իրականացվող ներգործությունն է՝ հաղորդակցության ցանկացած միջոցի պարբերաբար օգտագործմամբ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ցանկացած տեղեկատվություն, որի տարածողը հետապնդում է որևէ նպատակ, դառնում է քարոզչություն:

Գոյություն ունեն քարոզչության մի քանի սահմանումներ՝ սկսած ամենահակիրճից, որը վկայում է՝ «Ամեն ինչ քարոզչություն է»: Տերենց Քվալթերի բնորոշմամբ՝ քարոզչությունը կանխամտածված և ծրագրված փորձ է վերահսկելու կամ փոխելու կարծիքները՝ հաղորդակցության միջոցների օգտագործմամբ: Ֆրանսիացի սոցիոլոգ Ժակ Էլուլի կարծիքով՝ հաջողված քարոզչությունը ճշմարտացի քարոզչությունն է: Համաձայն մեկ այլ՝ ամերիկացի հետազոտող Լասվելի բնորոշման, քարոզչությունը կարծիքների կամ գործողությունների արտահայտում է, որն իրականացվում է անհատների կամ խմբերի կողմից դիտավորյալ կերպով և կանխորոշված արդյունքով՝ հոգեբանական մանիպուլյացիայի կիրառմամբ[1]:

ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ, օրինակ, մեծ կարևորություն է տրվել քարոզչական և հոգեբանական ներգործության եղանակների մշակմանը, հատկապես պատերազմական փուլում: Նույնիսկ նախագահ Վուդրո Վիլսոնն անձամբ մասնակցել է հոգեբանական օպերացիաների մշակմանը և խմբագրել քարոզչական թռուցիկների բովանդակությունը[2]:

Ներազգային և միջազգային մակարդակներով տարվող քարոզչությունը դարձել է ժամանակակից տեղեկատվական հասարակության առօրյա կյանքի բաղկացուցիչը: Ավելին, տեղեկատվական և հաղորդակցային համակարգերի զարգացումը լուրջ ազդեցություն է թողել նաև նոր սերնդի պատերազմների իրականացման, այլ կերպ ասած՝ ռազմական ոլորտում հեղափոխական փոփոխությունների վրա: Տեղեկատվական հասարակությունների համար լուրջ մարտահրավեր են համարվում ապագայում քաղաքական, տնտեսական, ռազմական ոլորտներում նորովի քարոզչության հնարավորությունները: Առաջ են եկել այնպիսի ձևակերպումներ, ինչպիսիք են Տեղեկատվական պատերազմը (ՏՊ), Տեղեկատվական օպերացիաները (ՏՕ), Հոգեբանական օպերացիաները (ՀՕ) և այլն[3]:

Սառը պատերազմի ավարտն ազդարարեց քարոզչության, այսպես կոչված, երրորդ ալիքի սկիզբը, որը համընկավ նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման հետ: Այն արմատական փոփոխություն մտցրեց նաև քարոզչական աշխատանքների իրականացման

[1] Propaganda and Mass Persuasion: A Historical Encyclopedia, 1500 to the Present / Nicholas J. Cull, David Culbert, David Welch, Santa Barbara, 2003, pp. 317-323. Քարոզչության և հոգեբանական պատերազմների այլ բնորոշումների մասին տե՛ս Keneth Macksey and William Woodhouse. The Penguin Encyclopedia of Modern Warfare 1850 to the Present Day, Viking, London, 1991, pp. 256-258.

[2] Christopher Simpson, Science of Coercion. Communication Research and Psychological Warfare, 1945-1960, Oxford University Press, 1996. Հոգեբանական պատերազմների կիրառման ԱՄՆ փորձի մասին ավելի մանրամասն տե՛ս Political Warfare and Psychological Operations. Rethinking the US Approach, Edited by Frank R. Barnett, Carnes Lord, National Defense University Press, 1989.

[3] Philip Taylor, Third Wave Info-Propaganda: Psychological Operations in the Post-Cold War Era, in Propaganda. Political Rhetoric and Identity 1300-2000, edited by Bertrand Taithe and Tim Thornton, Sutton Publishing, 2000, p. 327.

հնարավորությունների, եղանակների, ժամանակային և տարածքային չափանիշների և որպես դրանց հետևանք՝ քարոզչության արդյունավետության մեջ:

Ինտերնետ ցանցի առաջացումը և աննախադեպ զարգացումը լուրջ մարտահրավեր են քարոզչություն և հակաքարոզչություն իրականացնելու առումով: Ներկայումս կիբեռտարածքն ավելի ու ավելի է վերածվում համատարած մարտադաշտի՝ քարոզչական աշխատանք իրականացնողներին հնարավորություն ընձեռելով ավելի հասցեագրված և նպատակաուղղված իրականացնել իրենց ծրագրերը[1]:

Այս հանգամանքն էլ ավելի է կարևորվում օրեցօր զարգացող ինֆորմացիոն տեխնոլոգիաների և տեղեկատվական հոսքերի ինտենսիվության պարագայում, երբ յուրաքանչյուր պետության և հասարակության համար լուրջ խնդիր է դառնում տեղեկատվական անվտանգության ապահովումը: Հակառակ պարագայում մեծանում է պետական համակարգին սպառնացող և ներքին ու արտաքին վտանգների հավանականությունը:

Գոյություն ունեն «տեղեկատվական պատերազմ» հասկացության մի քանի սահմանումներ: Ահա դրանցից մեկը. «ՏՊ-ն, խաղաղ ժամանակ, ներազդող կողմի համար բարենպաստ որոշումներ կայացնելու համալիր ներգործություն է հակառակորդի պետական և ռազմական կառավարման համակարգի, ռազմաքաղաքական ղեկավարության վրա՝ ինֆորմացիոն գործողությունների ամբողջության ներառմամբ»[2]:

ՏՊ կարևորագույն բաղադրիչը, եթե չասենք՝ հիմքը, հոգեբանական պատերազմն (ՀՊ) է, որն ունի կիրառման իր առանձնահատկությունները թե՛ խաղաղ և թե՛ պատերազմական գործողությունների ժամանակ: Հոգեբանական պատերազմների հիմնական նպատակը հակառակորդի վրա զանգվածային հոգեբանական ներգործությունն է:

Հոգեբանական պատերազմների համակարգված քաղաքականություն ԱՄՆ-ը վարել է դեռևս սառը պատերազմի տարիներին: Դատելով գաղտնազերծված արխիվային փաստաթղթերից՝ թե՛ ամերիկյան և թե՛ բրիտանական կառավարությունները Խորհրդային Միության դեմ անընդմեջ կիրառել են «բացասական» գաղտնի քարոզչություն, որն, առաջին հերթին, միտված է եղել քայքայելու խորհրդային պետական համակարգը հենց ներսից[3]:

Սահմանափակ ռեսուրսների պարագայում քարոզչությունը և հատկապես հոգեբանական պատերազմի իրականացումը կոնկրետ երկրի համար կարող են ասիմետրիկ պատասխանի տարատեսակ հանդիսանալ:

Հոգեբանական պատերազմը (ՀՊ) ևս ունի մի քանի տարատեսակներ՝ ելնելով դրա իրականացման թիրախներից: Վաղ բնորոշումներում այն ձևակերպվում էր որպես միջոցառում, որի նպատակն էր «հակառակորդի զինուժին դրդել սիմուլյացիայի, դասալքման և գերի հանձնվելու, հակառակորդ կողմի զինուժի և խաղաղ բնակչության միջև սերմանել երկպառակություն և լարվածություն, հակառակորդի զինուժի մեջ անվստահություն առաջացնել հրամանատարության և կառավարության նկատմամբ՝ կասկածի տակ դնելով նրանց կողմից

[1] Նույն տեղում:
[2] Информационные войны, серия «Мир сегодня», Ереван, 2002, с. 4.
[3] Propaganda and Mass Persuasion: A Historical Encyclopedia, 1500 to the present, p. 93.

վարվող պատերազմի արդարացիությունը և հաղթանակի հավանականությունը, ինչպես նաև աջակցելով հակառակորդի տարածքում խափանարար խմբերի գործողություններին»[1]:

Կարևոր է նաև բացահայտել ոչ միայն ՀՊ էությունը, այլև այն գործոնների ամբողջությունը, որոնցից կախված է դրա իրականացումը: Այդպիսի գործոններից են քաղաքականությունը, անվտանգությունը, քարոզչության հնարավոր մեթոդները և կադրերը:

Ժամանակակից փուլում ՀՊ-ն բնորոշվում է նաև որպես բացարձակապես ինտելեկտուալ եղանակներով տարվող պատերազմ, որը կոչված է տեղեկատվության ագրեսիվ օգտագործման եղանակով ստեղծել որոշակի հասարակական կարծիք կամ մանիպուլյացիայի ենթարկել այն:

ԱՄՆ-ը արտաքին քաղաքականության ոլորտում հոգեբանական պատերազմների կիրառմանը մեծ նշանակություն տվեց Պանամա ներխուժման, 1991թ. Ծոցի պատերազմի, Բոսնիայում և Կոսովոյում իրականացրած ռազմական գործողությունների ժամանակ, ինչպես նաև ահաբեկչության դեմ մղվող պայքարի և 2003-ին Իրաքի դեմ սկսված պատերազմի ընթացքում:

Համացանցը և դրա հնարավորությունները ՏՊ-ում

Համացանցը (Ինտերնետ) հնարավորությունների և մարտահրավերների ունիվերսալ համակարգ է, որը մեր օրերում դարձել է քարոզչական և հակաքարոզչական աշխատանքների իրականացման կարևորագույն միջոց: ՏՊ վարելու Ինտերնետ ցանցի իրական հնարավորություններն ընդլայնվում են ժամանակի ընթացքում, և այդ զարգացումներից դուրս մնալը հետագայում կարող է շատ թանկ նստել կոնկրետ երկրի տեղեկատվական անվտանգության առումով:

Հատկանշական է 1995թ. ԱՄՆ Պաշտպանության ազգային ինստիտուտի թողարկած Մարտին Լիբիկի «Ինչ է տեղեկատվական պատերազմը» աշխատությունը, որում հեղինակը խոսում է տեղեկատվական պատերազմների յոթ տարատեսակների մասին: Դրանք են.

1. հրամանատարական-կառավարչական (*командно-управленческая*),
2. հետախուզական,
3. հոգեբանական,
4. հակերական,
5. տնտեսական,
6. էլեկտրոնային,
7. կիբեռպատերազմ[2]:

Ինչպես տեսնում ենք, դեռ Ինտերնետ ցանցի կայացման ակունքներում կիբեռպատերազմը հաստատուն տեղ է զբաղեցրել տեղեկատվական պատերազմներ իրականացնելու

[1] Տե՛ս П. Лайнбарджер, Психологическая война, М, 1962, с. 11.
[2] И. Панарин, Л. Панарина, Информационная война и мир, с. 150.

ամերիկյան ստրատեգների ծրագրերում, ըստ որում՝ կիբեռպատերազմը տարբերակվել է հակերական գործողություններից, որոնք անվիճելիորեն կարևոր տեղ են զբաղեցնում ՏՊ իրականացման ոլորտում:

Ներկայումս քննարկման առարկա է, այսպես կոչված, երկրորդ սերնդի տեղեկատվական զենքի միջոցով ինֆորմացիոն պատերազմներ վարելը: Այն ունի հետևյալ բաղադրիչները.

1. բարոյազուրկ, ոչ հոգևոր մթնոլորտի և հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծում,
2. քաղաքական լարվածության ու քաոսի ստեղծման նպատակով երկրի բնակչության սոցիալական խմբերի քաղաքական կողմնորոշման և հասարակական գիտակցության մանիպուլյացիա,
3. առճակատումների հրահրման, անվստահության, կասկածամտության սերմանման, քաղաքական պայքարի սրման նպատակով կուսակցությունների միջև քաղաքական հարաբերությունների ապակայունացում, ընդդիմության դեմ բռնությունների սադրում, փոխոչնչացման դրդում,
4. իշխանության և կառավարման մարմինների լրատվական ապահովվածության մակարդակի իջեցում, սխալ որոշումների մղում,
5. պետական մարմինների աշխատանքի մասին ապատեղեկատվության տարածում, նրանց հեղինակազրկում, կառավարման մարմինների վարկաբեկում,
6. սոցիալական, քաղաքական, ազգային և կրոնական բախումների հրահրում,
7. կառավարման մարմինների կողմից կայացվող որոշումների դժվարացում,
8. պետության հեղինակազրկում միջազգային ասպարեզում,
9. պետության կենսականորեն կարևոր շահերի վնասում քաղաքական, տնտեսական, պաշտպանական և այլ ոլորտներում[1]:

Ամերիկյան փորձագետների տվյալներով, ներկայումս աշխարհի ավելի քան 25 երկրներում աշխատանքներ են տարվում կիբեռպատերազմների վարման համար միջոցների ստեղծման ուղղությամբ[2]: Այլ կերպ ասած՝ պատերազմական գործողություններում ռումբերին և փամփուշտներին փոխարինելու են գալիս էլեկտրոնները:

Այս համակարգում առավել մեծ ուշադրություն է դարձվում, այսպես կոչված, հարձակողական ինֆորմացիոն զենքի կիրառմանը, որը ենթադրում է ինֆորմացիոն ներգործման մի քանի տեսակներ: Դրանք են՝

ա. տեղեկատվության գաղտնիության խաթարման միջոցներ,

բ. տեղեկատվության ամբողջականության խաթարման միջոցներ,

գ. տեղեկատվության հասանելիության խախտման միջոցներ,

դ. տեղեկատվական համակարգ օգտագործողների վրա հոգեբանական ներգործու-

[1] Գ. Հարությունյան, ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2003, էջ 30-31:
[2] Информационные войны, серия «Мир сегодня», Ереван, 2002, с. 15.

թյան միջոցներ[1]:

Պետական մակարդակով և հովանավորությամբ իրականացված տեղեկատվական հոսքերի վերահսկումը, դրանց նախնական մշակումը, վերլուծությունը և գոյություն ունեցող իրավիճակի շուրջ դրանց հիման վրա երկրի ղեկավարությանը համապարփակ և օպերատիվ տեղեկատվության տրամադրումը ենթադրում են գերիշխանություն հակառակորդ կողմի կամ կողմերի նկատմամբ՝ ապահովելով ռազմավարական լուրջ առավելություն:

Քարոզչությունը և հակաքարոզչությունը կոչված են տվյալ երկրի միջազգային հեղինակության ամրապնդմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպություններում ոչ ձեռնտու բանաձևերի չընդունմանն ուղղված քայլերի մշակմանը: Այս հանգամանքն առավել կարևորվում է հատկապես այն երկրների պարագայում, որոնք հակամարտության մեջ են գտնվում անմիջական հարևանների հետ և հետամուտ են այդ հարցում սեփական դիրքորոշման ամրապնդմանը արտաքին լսարանի առջև: Որպես կանոն, նման քաղաքականություն են իրականացնում նաև այն երկրները, որոնք ունեն տարբեր արտաքին քաղաքական առաջնայնությունների և դրանց իրագործման ելակետեր:

Ժամանակակից միջազգային հարաբերություններում ընդունված է աշխարհաքաղաքական տեղեկատվական մրցակցությունը համարել միջպետական պայքարի կարևոր ձևերից մեկը: Այն միաժամանակ միջոցների մի համակարգ է, որը կիրառվում է կոնկրետ պետության կողմից հակառակորդ պետության տեղեկատվական անվտանգությունը խաթարելու, ինչպես նաև հակառակորդ կողմի համանման գործողություններից պաշտպանվելու նպատակով[2]:

Քարոզչական համալիր և համատեղ ծրագրերի արդյունքում բարիդրացիական կամ առնվազն չեզոք դիրքորոշման ապահովումը միջազգային հանրության համար տվյալ պետության կարևորագույն արտաքին քաղաքական նպատակներից մեկը պետք է լինի:

Այս համատեքստում զանգվածային լրատվամիջոցները ժամանակակից տեղեկատվական պատերազմի իրականացման և դիմադրության ամենազորեղ միջոցներից են: Միևնույն ժամանակ, զանգվածային լրատվամիջոցները կարող են նաև դառնալ հակառակորդի գործիքը՝ դրանցով իր օգտին ապատեղեկատվություն տարածելու և շինծու հասարակական տրամադրություններ ստեղծելու առումով: Ոչ ճիշտ լրատվական քաղաքականության իրականացման, տեղեկատվության արագ և օպերատիվ ապահովման բացակայության, ինչպես նաև լրատվության աղբյուրների ոչ գրագետ ընտրության դեպքում (հատկապես երբ այն ընտրում է հակառակորդ երկրի ԶԼՄ-ն) մենք գործ ունենք տեղեկատվական անվտանգությանն սպառնացող վտանգի և դրանից բխող լուրջ հետևանքների հետ:

Ամերիկացի հետազոտող Գ.Լասվելը ԶԼՄ-ի համար առանձնացնում է չորս հիմնական գործառույթներ. 1. աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին հետևելը (տեղեկատվության հավաքում և տարածում), 2. «խմբագրումը» (տեղեկատվության հավաքում և մեկնաբանում), 3. հասարակական կարծիքի ձևավորումը և, վերջապես, 4. մշակույթի տարածումը[3]:

[1] Նույն տեղում, էջ16:
[2] И. Панарин, Л. Панарина, Информационная война и мир, с. 21.
[3] Նույն տեղում, էջ 110:

Լրատվամիջոցներին կարևոր տեղ է հատկացվում նաև, այսպես կոչված, «սև քարոզչության» տարածման համար, որը հիմնականում դրսևորվում է ապատեղեկատվության տարածմամբ:

Ապատեղեկատվության օգտագործումն ապակողմնորոշում է հակառակորդ կողմին ժամանակավորապես, կոնկրետ իրավիճակում ապահովում է առավելություն, ինչպես նաև դրդում է կայացնել ոչ ճիշտ և թերի որոշումներ:

***

Արցախյան հիմնախնդրի վերարծարծումից հետո թե՛ հայկական և թե՛ ադրբեջանական կողմերը ձեռնարկում են քարոզչական և հակաքարոզչական տարբեր միջոցառումներ սեփական տեսակետներն ամրագրելու, հակառակորդին թուլացնելու նպատակով: Հայկական կողմն այս քաղաքականությունն իրականացնում է առանց աշխատանքների ու մոտեցումների քիչ թե շատ կենտրոնացված և ուղղորդված համադրման և համակարգման՝ մինչև օրս լիարժեքորեն չօգտագործելով Սփյուռքում առկա ռեսուրսները և հայկական համայնքների հնարավորությունները: Այսպիսով, կարող ենք պնդել, որ այս ոլորտում դեռ կան չիրականացված բազում հնարավորություններ:

Անհրաժեշտ է վերլուծել և գնահատել առանձին թեմաների շուրջ ադրբեջանական կողմի քարոզչական աշխատանքների առանձնահատկությունները, դրանց կիրառման մեխանիզմները, աղբյուրներն ու գրանցված արդյունքները:

Ադրբեջանական կողմի քարոզչական աշխատանքների իրականացման առանձնահատկությունների ուսումնասիրության, դրանց արդյունավետության պատճառների բացահայտման, ինչպես նաև քարոզչական և հակաքարոզչական աշխատանք իրականացնելու համար սույն աշխատանքի սահմաններում նպատակադրվել ենք կիրառել հետևյալ կարևոր մոտեցումները.

- ուրվագծել ադրբեջանական քարոզչական աշխատանքի իրականացման նախապատմությունը և հակահայ քարոզչության ելակետերը,
- դիտարկել ադրբեջանական սփյուռքի ստեղծմանն ուղղված ադրբեջանական պետական քաղաքականությունը և դրա միջոցով քարոզչական աշխատանք իրականացնելու եղանակները,
- բացահայտել Ադրբեջանի հակահայկական քարոզչության ընդհանուր ուղղությունները, դրանց առանձնահատկություններն ու համակարգման եղանակները,
- հետևել Ադրբեջանում լույս տեսնող հակահայ գրականության բովանդակությանը և դրանց դեմ հակաքարոզչություն իրականացնելու որոշակի առաջարկներ անել,
- վերլուծել ադրբեջանական մամուլում քարոզչական բնույթի հրապարակումները և մշակել ընդհանուր մոտեցումներ հայկական կողմի հակափաստարկների մշակման ուղղությամբ,
- քննարկել հայկական կողմի քարոզչության և հակաքարոզչության կենտրոնացված մի քանի կառույցների ստեղծման խնդիրը,

- անել որոշակի առաջարկներ գրահրատարակման, մամուլի, Համացանցի և այլ միջոցներով քարոզչական աշխատանքներ տանելու, ինչպես նաև ադրբեջանական ապատեղեկատվության դեմ հայկական լրատվամիջոցների կողմից ընդհանուր քաղաքականություն մշակելու վերաբերյալ:

Ստիպված ենք փաստել, որ ներկայումս մեր առջև ծառացած է լուրջ խնդիր, այն է՝ պետության և Սփյուռքի ռեսուրսների օգտագործմամբ Հայաստանի Հանրապետությունը և Ղարաբաղյան հիմնահարցը միջազգային հանրությանը պատշաճ և հնարավորինս հայանպաստ դիրքերից ներկայացնելը: Պետք է արձանագրել, որ եթե հիմնահարցի վերաբացման նախնական շրջանում հայկական կողմը հնարավորին չափ ապահովել էր նման դիրքորոշում արևմտյան ԶԼՄ-ում և կառավարող շրջանակներում, ապա հակամարտության ռազմական փուլի ընթացքում և հատկապես ադրբեջանական կողմից, այսպես կոչված, նավթային լոբբինգի կիրառման արդյունքում ներկայումս լուրջ խնդիր գոյություն ունի թեկուզև Հայաստանը ներկայացնելու առումով[1]:

Հայկական ազգայնական շարժման նկատմամբ մեծ մասամբ դրական մոտեցումները Արևմուտքի քաղաքական շրջանակներում և մամուլում կտրուկ փոխվել են՝ որոշակիորեն նկատելի ադրբեջանամետ երանգներ ստանալով: Ուստի խիստ հրատապ է դառնում պետական և պետականամետ քարոզչության համակարգված իրականացումն արտասահմանում՝ միաժամանակ ուշադրությունից դուրս չթողնելով նաև ներքին քարոզչության կարևորությունը:

Պետական քաղաքականության ոլորտում քարոզչության և հատկապես հոգեբանական ներգործության եղանակներին մեծ տեղ է հատկացվում նաև ՀՀ անմիջական հարևան Թուրքիայում: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ և ընդհանրապես հակահայկական քարոզչական աշխատանքներում Անկարայի գործողությունները կրում են ՀՊ և ՏՊ ակնհայտ տարրեր[2]: Թուրքական բանակային ստորաբաժանումներում ևս հատուկ ուշադրություն է դարձվում հոգեբանական պատերազմների կիրառմանը: Այսպես, ՀՀ սահմանամերձ հատվածում տեղաբաշխված թուրքական ԶՈՒ Երրորդ դաշտային բանակի կազմում գործում է հոգեբանական պատերազմներ մղելու հատուկ գումարտակ[3]:

ՀՀ դեմ ինֆորմացիոն և հոգեբանական պատերազմներ կիրառելու նպատակահարմարության մասին պարբերաբար անդրադարձ է լինում նաև ադրբեջանական մամուլում[4]:

Տեղեկատվական-հոգեբանական օպերացիայի մշակման և տարածման ժամանակ անհրաժեշտ է կիրառել համալիր մոտեցում՝ ներառելով հետևյալ ձևաչափը.

օպերատիվ խումբ→ պաշտոնական հայտարարություն→ էլեկտրոնային և տպագիր ԶԼՄ→ թիրախ լսարան:

Առանց վարանելու պետք է արձանագրել, որ նման կարգի աշխատանք իրականացնելու համար պահանջվում են լուրջ պետական մոտեցում և որոշակի ժամանակային ու մարդկային ռեսուրսներ օպերացիաները պատշաճ մակարդակով իրականացնելու համար:

[1] Արևմտյան լրատվամիջոցների՝ Ղարաբաղյան հիմնահարցի նկատմամբ դիրքորոշման վերլուծությանն է նվիրված՝ Hayk Demoyan, The Western Media Coverage of Nagorno-Karabakh Conflict in 1988-1990, Yerevan, 2005 (ձեռագիր):
[2] Taner Akçam, Dialogue Across an International Divide: Essays Towards a Turkish-Armenian Dialogue, The Zoryan Institute, 2001, 17.
[3] Независимая газета, 17.07.1994.
[4] Տե՛ս Дж.Мамедов, М.Мамедов Информационная война выходит на первый план, Зеркало, 22. 05. 2004.

1. Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ Ադրբեջանի քարոզչության նախապատմությունը և հակահայ քարոզչության ելակետերը

1988թ. սկսած՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ թե՛ ադրբեջանական և թե՛ հայկական կողմերն իրականացնում են տարատեսակ քարոզչություն և հակաքարոզչություն: Անցած տարիների ընթացքում երկուստեք տարվող «քարոզչական պատերազմների» և դրանց արդյունքների նախնական ուսումնասիրությունը բերում է այն եզրակացությանը, որ թեև ադրբեջանական կողմը քիչ թե շատ մշակված մոտեցում ունի այս ոլորտում, այդուհանդերձ, չի կարողանում համոզիչ և լիակատար կերպով ձևակերպել իր տեսակետները, չնայած քարոզչական աշխատանքի ինտենսիվությանն ու պետական հովանավորությանը: Սակայն չի կարելի ասել, թե ադրբեջանական քարոզչությունը չի արձանագրել որոշակի արդյունքներ՝ առաջին հերթին Ղարաբաղյան հակամարտությունում սեփական տեսակետների ամրագրման առումով:

Ղարաբաղյան շարժման սկզբից ևեթ հանդես գալով հայկական կողմի պահանջատիրությունը չեզոքացնելու և հակառակ պահանջատիրություն ներկայացնելու ուղղությամբ՝ ադրբեջանական կողմի գործողություններն այս ոլորտում որոշակի փոխակերպման ենթարկվեցին՝ տարբեր փուլերում ներառելով հետևյալ գործողություններն ու քայլերը.

1. ապատեղեկատվություն և զեղծարարություն Արցախում հայերի բնակեցման, պատմության և կարգավիճակի շուրջ,
2. հայերի էթնիկ նկարագրի շուրջ բացասական որակումներ պարունակող պատմական նյութերի և վավերագրերի բազմացում,
3. հայկական մշակութային ժառանգության ադրբեջանականացում կամ դրանց ոչնչացում,
4. Հայաստանն ագրեսիվ երկիր ներկայացնելուն միտված քարոզչական աշխատանքների իրականացում,
5. խորհրդային մահմեդական և թրքախոս բնակչության շրջանում հակահայկական տրամադրությունների բորբոքում[1],
6. ադրբեջանական կողմին որպես զոհ ներկայացնելը՝ Ադրբեջանում հայերի ջարդերը ստվերելու և մոռացության տալու նպատակով:

Ներկայումս ադրբեջանական կողմի քարոզչական ակտիվությունը ներառում է հետևյալ ելակետերը.

1. Հայաստանը ագրեսիվ երկիր է, որը զավթել է Ադրբեջանի տարածքների 20%-ը, որի արդյունքում 1 մլն ադրբեջանցի դարձել են փախստական,
2. երկրորդ հայկական պետության ստեղծման բացառումը՝ վկայակոչելով առաջնային ինքնորոշման սկզբունքը,
3. «հայկական ահաբեկչության» ակտիվ լուսաբանումը և դրա արդյունքում Ադրբեջանի՝

[1] Այդպիսի քայլերի հետևանքն էին հակահայկական ցույցերն ու բռնությունները Թուրքմենստանում, Դուշանբեում, ինչպես նաև Հյուսիսային Կովկասում:

որպես միջազգային ահաբեկչական ցանցի համար հանգրվան-երկրի քողարկումը,

4. Հայաստանը՝ որպես շրջափակման արդյունքում փլուզված տնտեսություն և կիսասոված բնակչություն ունեցող երկիր, ներկայացնելը՝ հիմնականում ներքին քարոզչության նպատակով,
5. հայկական բանակի հանդեպ ադրբեջանական բանակի ռազմական գերիշխանության տեսակետի ամրագրմանն ուղղված ջանքերը,
6. Հայոց ցեղասպանության պատմական իրողության հերքումը և այս ոլորտում թուրքական քարոզչության հետ համատեղ տեսակետների մշակումը,
7. հայերի կողմից ադրբեջանցիների «ցեղասպանություն» իրականացնելու մտացածին տեսակետի զարգացումը՝ երկրի առաջին դեմքերի կողմից ընդունված օրենսդրական ակտերի միջոցով,
8. Ղարաբաղյան հակամարտության՝ որպես կասպյան նավթի և գազի պաշարների արտահանմանը խոչընդոտող և տարածաշրջանի կայունությունը վտանգող գործոնի քարոզումը։

Հիշյալ քարոզչական և հակաքարոզչական ելակետերի բազմացման և տարածման համար ադրբեջանական կողմը ձեռնամուխ է եղել հետևյալ եղանակներով և ուղղություններով ***պետական կամ պետական հովանավորությամբ*** քարոզչական աշխատանքների իրականացմանը.

1. միջազգային ատյաններում երկրի առաջին դեմքերի կողմից հիշյալ դրույթների ներկայացում և դրանց հաստատագրման աշխատանքների իրականացում,
2. ադրբեջանամետ հոդվածների տպագրություն արտասահմանյան թերթերում,
3. արտասահմանում ուսանող ադրբեջանցի երիտասարդության միջոցով հակահայկական քարոզչության տարածում, արտասահմանյան համալսարանների գրադարաններում անգլիալեզու քարոզչական գրականության տարածում,
4. այլազգի վարձու հեղինակների կողմից հակահայկական բնույթի քարոզչական աշխատությունների հրատարակում կամ նրանց ներգրավում քարոզչական աշխատանքներում (Տատյանա Չալաձե, Օ.Պեչենով, Էրիխ Ֆայգլ (Ավստրիա), Էնդրյու Մանգո (Մեծ Բրիտանիա) և այլն)։ Ադրբեջանական կողմը դիմում է նաև թրքամետ օտարազգի հեղինակներին, ովքեր ժխտում են Հայոց ցեղասպանության պատմական փաստը,
5. ադրբեջանական սփյուռքի կառույցների ստեղծում և հակահայկական քարոզչության իրականացում դրանց միջոցով,
6. տեղեկատվական համակարգերի և քարոզչության միջոցների համախմբման քայլերի իրականացում։

Ադրբեջանական կողմի քարոզչական աշխատանքների արդյունավետության բարձրացման համար լայնորեն օգտագործվում են Համացանցի հնարավորությունները։ Կիբեռ-

տարածքի քարոզչական հնարավորություններն օգտագործվել են դեռևս 1990-ականների վերջերին, երբ ադրբեջանցի ուսանող Ադիլ Բաղիրովն ստեղծեց առաջին ադրբեջանական էլեկտրոնային ռեսուրսը, որը հիմնականում պարունակում էր Ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ ադրբեջանամետ քարոզչական նյութեր:

Ներկայումս համակարգման և համախմբման նպատակներով Ադրբեջանի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը նախաձեռնել է ստեղծել Ինտերնետ ցանցի կոորդինացման գլխավոր կենտրոն, որը մշակելու է պետական մոտեցումները Ինտերնետի օգտագործման ոլորտում, կառավարության առջև հանդես է գալու նոր առաջարկներով՝ օրենսդրական դաշտի կատարելագործման և ինտերնետային ցանցի զարգացմանն առնչվող հարցերի շուրջ[1]: Անշուշտ, նման քաղաքականությունը ենթադրում է նաև կիբեռտարածքում պետականամետ քարոզչության համակարգում:

Հաճախակի բնույթ են կրում նաև Համացանցում հայկական ռեսուրսների դեմ ադրբեջանական հակերների ուղղորդված և նպատակային հարձակման դեպքերը, որոնք հայ-ադրբեջանական հակամարտության «սառը պատերազմի» փուլում առանձնակի տեղ են գրավում: Առանց վարանելու կարող ենք պնդել, որ դրանք պետական հովանավորում և ուղղորդում ունեն[2]:

Ադրբեջանի կողմից իրականացվող էլեկտրոնային պատերազմի օրինակ կարող են ծառայել 2000թ. սկզբներին հայկական մի շարք Ինտերնետ կայքերի դեմ արված հարձակումները, որոնց արդյունքում ժամանակավորապես շարքից դուրս եկան Հայոց ցեղասպանության և Ղարաբաղյան հիմնահարցի թեմաներով, ինչպես նաև տեղեկատվական շուրջ մեկ տասնյակ կայքեր[3]: Պետք է նշել, որ այս գործողությունը որոշակի հոգեբանական ազդեցություն ունեցավ նաև բուն ադրբեջանական հասարակության ներսում, և մինչ հայկական կողմից համարժեք պատասխան գործողությունների կիրառումը, հայկական կայքերի դեմ ուղղված հակերական հարձակումը էյֆորիկ տրամադրություններ առաջացրեց, մասնավորապես, ադրբեջանական մամուլի էջերում:

Այս խափանարար քայլերի իրականացումը լիովին համապատասխանում է ժամանակակից ՏՊ իրականացման առաջնայնություններին, ուստի հայկական կողմի համար խիստ կարևոր է անվտանգ տեղեկատվական համակարգի ձևավորումը, առավել ևս հաշվի առնելով այն հանգամանքը, որ ադրբեջանական հակերական հարձակումները, որպես կանոն, տեղի են ունենում թուրքական համանման խմբերի հետ համատեղ[4]:

1.1. Հայոց պատմության դեսիմվոլիզացիայի և զեղծարարության փորձերը

Ինֆորմացիոն գործողությունները ձեռք են բերում կարևոր նշանակություն՝ հիմնա-

[1] Азербайджан создает орган координации Интернета URL: http://www.day.az/news/hitech/21171.html
[2] Эхо, 12.03.2005.
[3] Azerbaijan to Secure Internet Sites from Armenian hackers, http://www.eurasianet.org/resource/armenia/hypermail/200002/0021.html, Ноян Тапан, 14. 02. 2000, Mark Grigorian, Sparks are flying in cyberspace as the Nagorno-Karabakh conflict takes on a new and unexpected dimension.Institute for War & Peace Reporting Caucasus Reporting Service, Issue 17, February 4, 2000.
[4] Տեղեկությունը տրամադրել է Կարեն Վրթանեսյանը:

կանում ներառելով ներգործության երկու՝ էլեկտրոնային և հոգեբանական ոլորտները։ Էլեկտրոնային ներգործության եղանակները կիրառվում են համակարգչային և ռադիոէլեկտրոնային ցանցերում, հոգեբանական ներգործության մեթոդները՝ տարաբնույթ աշխատաեղանակներով. ապատեղեկատվության տարածում, հատուկ մշակված տեղեկատվական օպերացիաներ և այլն։ Հոգեբանական գործողություններում հատուկ կարևորություն է ձեռք բերում հոգևոր և բարոյական արժեքների, պետական, ազգային և պատմական խորհրդանիշերի արժեզրկումը։

Ադրբեջանական քարոզչության կարևորագույն բաղադրիչներից են հայ ժողովրդի պատմության զեղծումները, պատմական և նյութական, մշակութային արժեքների ոչնչացումը, դրանց նախապատմության կեղծումը, արհեստածին և գիտականորեն չհիմնավորված տեսակետների առաջքաշումը և դրանց հիմնավորման համար այլազգի վարձու հեղինակների ներգրավումը։ Գրանցվել են օրինակներ, երբ համակարգչային պարզ գրաֆիկական ծրագրերի օգտագործմամբ կեղծվում է հայկական պատմական հուշարձանների ինքնությունը, այդ տեսքով արդեն դրանք զետեղվում են պետական հովանավորությամբ տպագրվող գրքերում[1]։ Ըստ որում՝ բացի հայկական մշակութային ժառանգության հանդեպ ոտնձգություններից, համանման քայլերից զերծ չեն մնում նաև հարևան մյուս ազգերը ևս՝ իրանցիները, վրացիները, լեզգիները, թալիշները և այլն[2]։ Այս հանգամանքը հայկական կողմի համար կարևոր քարոզչական հաղթաթուղթ կարող է հանդիսանալ հակաադրբեջանական քարոզչության իրականացման ոլորտում միասնական ճակատ կազմելու առումով։

Հայոց պատմության ադրբեջանական «սրբագրման» փորձերը հանգում են հետևյալին.

1. հայերի եկվոր և ադրբեջանցիների բնիկ լինելու տեսակետի ամրագրում,
2. հին ժամանակներից սկսած՝ հայ էթնոսի զավթողական հակումների դրսևորում,
3. հայկական անկախ պետականության բացակայության տեսակետի ամրագրում,
4. հին և ժամանակակից հայերի անհամապատասխանելիության տեսակետի զարգացում,
5. հայոց թագավորների օտարազգի ծագման տեսակետի տարածում,
6. միջնադարյան հայ հեղինակների «աղվանացում»,
7. Արևելյան Հայաստանի, մասնավորապես՝ Արցախի տարածքում հայկական տարրի բնակեցման ժամանակաշրջանի նեղացում,
8. Հայոց ցեղասպանության պատմական իրողության հերքում,
9. վերջին 200 տարիների ընթացքում հայերի կողմից ադրբեջանցիների ցեղասպանության իրականացման մտացածին տեսակետի ամրագրում,
10. Երևանի նահանգի ադրբեջանական ծագումը և Առաջին հայկական պետականությունը ադրբեջանական իշխանությունների թույլտվությամբ այստեղ կազմակերպելու մասին տեսակետ,

[1] Տե՛ս Историческая география Западного Азербайджана, сост. Сабир Асадов, Изд-во «Азербайджан», Баку, 1998.

[2] Բոլորովին վերջերս «ադրբեջանականացման» ենթարկվեց վրացական Դավիթ Գարեջիի մենաստանի այն հատվածը, որ գտնվում է Ադրբեջանի տարածքում։ Այստեղ կարևորվում են հակաքարոզչության ժամանակ հարևան երկրների հետ համատեղ քայլերի իրականացումը և նման փաստերի օպերատիվ հավաքումն ու տրամադրումը շահագրգիռ կողմերին, տե՛ս Зеркало, Баку, 31.01.2004.

11. հայկական պատմական տեղանունների թրքացում կամ դրանց ադրբեջանական անվանումների հիմնավորման փորձեր[1]:

Հայկական պատմամշակութային ժառանգության և հայկական խորհրդանիշերի հանդեպ ադրբեջանական ոտնձգությունները նախորդեցին Ղարաբաղյան շարժմանը[2]: Հատկանշական է, որ Արցախի հայ բնակչության աղվանացման փորձերը ձեռնարկվեցին շարժմանը նախորդող տարիներին՝ առավել ամրագրելով ադրբեջանական կեղծ պատմագիտության ավանդույթները: Զիա Բունիաթովի, Ֆարիդա Մամեդովայի, Սումբաթզադեի աշխատություններում տեղ գտած պատմության զեղծումները, կոչված լինելով ամրագրել ադրբեջանական պետականության շարունակականության մասին տեսակետը Հարավարևելյան Կովկասի տարածքում, ակնհայտ հարձակողական բնույթ էին կրում՝ պատմական աղբյուրների ընտրության, դրանց կեղծման և յուրովի մեկնաբանությունների համալիր մոտեցումներով հանդերձ:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ հակահայկականության դրսևորումներն Ադրբեջանում հաստատուն տեղ ունեին դեռ Ղարաբաղյան շարժումից էլ առաջ:

Ադրբեջանական կողմին հատուկ է հակամարտությանը վերաբերող առասպելների ստեղծումը քարոզչական նպատակներով: Այսպես, առավել տարածված առասպելներից կարելի է թվարկել Ադրբեջանում 20 հազ. հայերի մասին քարոզչությունը, չնայած 1999թ. մարդահամարի տվյալներով՝ պաշտոնապես Ադրբեջանում բնակվում են ազգությամբ հայ 657 քաղաքացի[3]: Այս հանգամանքը միջազգային հանրությանը ներկայացվում է որպես ադրբեջանական հասարակության մեջ հայերի հանդեպ հանդուրժողականության դրսևորում: Բազմաթիվ են դեպքերը, երբ Բաքվում բնակարանային մաֆիայի կողմից հատուկենտ, հիմնականում տարեց հայերի նկատմամբ կիրառվում է հալածանքի և հաշվեհարդարի քաղաքականություն, միևնույն ժամանակ նույնիսկ պաշտոնական մակարդակներում մերժվում է հայազգի ներկայացուցիչների տարրական իրավունքների պաշտպանությունը[4]:

Ադրբեջանում, նույնիսկ նախագահների մակարդակով, ժամանակ առ ժամանակ հակահայ բնույթի հայտարարություններ են արվում, որոնք արտացոլվում են տեղական մամուլի էջերում: Նման փաստերի առկայության պայմաններում անհրաժեշտ հակաքարոզչություն իրականացնելն այնքան էլ դժվար խնդիր չէ: Այս առումով խիստ կարևոր է նման փաստերի հավաքումը, մշակումը և դրանց տարածումը քարոզչական նպատակներով:

Հաջորդը Խոջալուում իրականացված, այսպես կոչված, «ադրբեջանցիների ցեղասպանության» տեսակետի զարգացումն է: Հայկական կողմն առանձին հետազոտություն է անց-

[1] Տե՛ս Азиз Аликперли, Западный Азербайджан, Элм, Баку, 2003, на азерб.
[2] Այսպես, 1987թ. «Բակինսկի ռաբոչի» թերթում Հոկտեմբերյան հեղափոխության 70-ամյակի կապակցությամբ տպագրվեցին բոլոր խորհրդային հանրապետությունների զինանշանները, սակայն ՀԽՍՀ զինանշանը պատկերվեց առանց Արարատ լեռան: Այս հանգամանքը զայրույթի ալիք առաջ բերեց Հայաստանում, որտեղից նամակ-բողոքներ ուղղվեցին Բաքու:
[3] Տե՛ս: http://www.day.az/news/society/11406.html
[4] Г. Демоян, Этническая принадлежность в политическом и общественном дискурсе современного Азербайджана, Баку, 2004, с. 8-9.

կացրել՝ ադրբեջանական և արտասահմանյան չեզոք աղբյուրների հիման վրա[1]: Իրադարձությունների մեկնաբանումը հայկական կողմից որոշակիորեն շփոթության մեջ է գցում ադրբեջանական կողմին, որը հենց իր առաջ քաշած տեսակետների որևէ լուրջ հակափաստարկ չի կարողանում ներկայացնել:

Խոջալուի կրակակետերի չեզոքացմանը հաջորդած ադրբեջանցի և մսխեթցի թուրքերի զանգվածային սպանությունները բացատրելու առումով հայկական կողմի համար խիստ կարևոր է հետևյալ տեսակետների ներկայացումը.

ա. Խոջալուն ոչ թե խաղաղ բնակավայր էր, այլ Ստեփանակերտի դեմ ստեղծված վտանգավոր կրակակետ, որը լուրջ սպառնալիք էր ներկայացնում Ստեփանակերտի հայ ազգաբնակչության անվտանգությանը,

բ. նախքան Խոջալուի կրակակետերի չեզոքացումը և դրա զբաղեցումը հայկական ուժերի կողմից, վերջիններս գյուղում մնացած խաղաղ բնակչությանը բարձրախոսներով բազմիցս զգուշացրել են սպասվող գործողության մասին՝ կոչ անելով նրանց հեռանալ իրենց տներից՝ անիմաստ զոհերից խուսափելու համար: Այս փաստը հաստատվում է ադրբեջանցի ականատեսների վկայություններով և մամուլի հրապարակումներով,

գ. գրոհից առաջ հայկական ուժերը երկու մարդասիրական միջանցք են թողել խաղաղ բնակչության նահանջի համար, որից և օգտվել են վերջիններս դեպի Աղդամ շարժվելու համար: Բուն Խոջալուում գրոհի ժամանակ ադրբեջանական կողմից եղել է ընդամենը 10 զոհ,

դ. ողբերգության անմիջական պատասխանատվությունը կրում է Ադրբեջանի Ազգային ճակատը, որի Աղդամի մասնաճյուղի պարագլուխները ապակողմնորոշել են խաղաղ բնակչության հետ նահանջող ադրբեջանական ուժերին՝ նրանց ուղղորդելով դեպի հայկական Նախիջևանիկ գյուղը: Սկզբնապես հաղորդվել էր, թե իբր գյուղը մաքրվել է հայ բնակիչներից, և մինչև Աղդամ հասնելը նահանջողները կարող են հանգրվանել հայերից ազատված գյուղում,

ե. դիտավորյալ ապակողմնորոշման արդյունքում ադրբեջանական ուժերը բախվում են Նախիջևանիկ գյուղի ինքնապաշտպանական ուժերի պահակակետերի հետ, ոչնչացնում են առաջին պահակակետը, սակայն հանդիպում մյուսների դիմադրությանը: Խաչաձև կրակահերթերի տակ, մթության մեջ ադրբեջանական կողմը տալիս է մի քանի տասնյակ զոհեր (այդ թվում նաև խաղաղ բնակիչներ): Բնակչության մեծ մասը խուճապահար փախչում է Աղդամի ուղղությամբ: Աղդամի մատույցներում, հրետակոծության արդյունքում, տեղի է ունեցել ադրբեջանական բնակչության զանգվածային կոտորած: Ամենահավաստի վարկածն այն է, որ մթության մեջ ադրբեջանցիների հոծ զանգվածին ադրբեջանական ուժերն ընդունել էին իբրև հարձակվող հայեր և կրակ բացել նրանց ուղղությամբ: Նման դեպքերը պատերազմական գործողությունների ժամանակ և հատկապես մթության պայմաններում հազվադեպ չեն,

[1] Гайк Демоян, Левон Мелик-Шахназарян, Ходжалинское дело: особая папка, Ереван, 2003, Hayk Demoyan, Levon Melik-Shahnazaryan, Khodjalu Case: A Special Dossier, Yerevan, 2004.

զ. դեպքերի հաջորդ օրը տեղի են ունեցել դիակապտության և դիակների ծաղրուծանակի ենթարկման դեպքեր, որոնք և գրանցվել են ադրբեջանցի լրագրող Չինգիզ Մուստաֆանի կողմից: Վերջինս այս մասին տեղյակ է պահել Ադրբեջանի նախագահ Ա.Մութալիբովին, որն իր հերթին զգուշացրել է լրագրողին որևէ մեկին չհայտնել իր կասկածների մասին, քանզի նա դրա դիմաց կարող էր հատուցել կյանքով[1]: Մի քանի ամիս անց Չ.Մուստաֆանը սպանվում է չբացահայտված հանգամանքներում,

է. ադրբեջանցի պատանդներին հայկական կողմը ցուցաբերել է անհրաժեշտ բուժօգնություն, տրամադրել սննդամթերք, որից հետո կարճ ժամանակամիջոցում, առանց որևէ նախապայմանի, նրանք հանձնվել են ադրբեջանական կողմին,

ը. Ադրբեջանի Ազգային ճակատի կողմից Խոջալուի խաղաղ բնակչության դիտավորյալ սպանդը նպատակ էր հետապնդում վարկաբեկել գործող նախագահ Ա.Մութալիբովին: Արդյունքում՝ դեպքերից մի քանի օր անց Ա.Մութալիբովը հրաժարական է տալիս, իսկ մի քանի ամիս անց Ադրբեջանի նախագահ է դառնում ԱԱՃ առաջնորդ Աբուլֆազ Էլչիբեյը:

Հայկական կողմի համար խիստ կարևոր է տեղեկացված լինել այս դեպքերի շուրջ հրապարակված արտասահմանյան և ադրբեջանական աղբյուրների տեղեկությունների մասին, քանզի դրանցում հետաքրքիր մանրամասներ կան, որոնք լուրջ կռվան կարող են հանդիսանալ ադրբեջանական միակողմանի քարոզչությանը հակադրվելու տեսանկյունից:

Ադրբեջանական կողմից ցեղասպանության իրական ակտի ապացույց կարող են հանդիսանալ 1988թ. փետրվարի 27-29-ին Սումգայիթ քաղաքում, ինչպես նաև 1990թ. հունվարին Բաքվում հայ բնակչության դեմ իրականացված ոճրագործությունները: Ցեղասպանության տարրեր է պարունակում նաև 1992թ. ամռանը Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղի խաղաղ հայ բնակիչների սպանդը, որը, ցավոք, քիչ է հայտնի միջազգային հանրությանը, թեև ժամանակին այդ փաստերը արձանագրվել և դատապարտվել են միջազգային դիտորդների կողմից:

2005 թվականը կարելի է բացառիկ համարել Խոջալուի սպանությունները հայկական կողմի դիտավորյալ «ցեղասպանություն» ներկայացնելու տեսակետից, քանզի ադրբեջանական քարոզչության հետևողական աշխատանքի արդյունքում դրա շուրջ հայտարարություններ հնչեցին ամերիկյան կոնգրեսականների և իրանական (մասնավորապես՝ դեսպան Աֆշար Սուլեյմանիի) քաղաքական գործիչների կողմից[2]:

Այս ամենի հետ մեկտեղ, նկատվում են նաև պաշտոնական մակարդակով հայերի կողմից «ադրբեջանցիների ցեղասպանություն» իրականացնելու հիմնավորմանն ուղղված քայլեր: Այսպես, 1997թ. Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը ստորագրեց հրամանագիր «Հայաստանից ադրբեջանցիների բռնագաղթման մասին», իսկ 1998թ. մարտի 31-ին հրապարակ հանվեց «Ադրբեջանցիների ցեղասպանության» պաշտոնական փաստաթուղթը: Մարտի 31-ն այդ օրվանից ի վեր համարվում է «Ադրբեջանցիների ցեղասպանության օր»: Օրվա

[1] Տե՛ս К. Столяров, Распад: от Нагорного Карабаха до Беловежской пущи, Олма-Пресс, М. 2001.
[2] Iranian Parliament May Discuss Khojaly, Baku Today, 01/03/2005.

ընտրությունը պայմանավորված է 1918թ. Բաքվի մահմեդականների և Բաքվի կոմունայի միջև տեղի ունեցած բախումներով, ինչի արդյունքում եղել են զոհեր:

Ինչ խոսք, նկատելի է ադրբեջանական պաշտոնական շրջանների ձգտումը՝ քարոզչական նպատակներով հիմնավորել «սեփական ցեղասպանության» տեսակետը, որը մի կողմից՝ Ղարաբաղյան հիմնահարցում ամրագրելու է Ադրբեջանի՝ որպես զոհի կերպարը, իսկ մյուս կողմից՝ կոչված է հակակշիռ ստեղծելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին:

Այս հենքի վրա ժամանակակից Ադրբեջանում ստեղծվում է հայի՝ որպես «թշնամու», կերպարը: Ի թիվս այլ էթնիկ ներկայացուցիչների՝ ռուսներ, պարսիկներ, քրդեր և այլն, հայերի՝ որպես թշնամու, կերպարն առաջնային տեղում է: Այս կերպարի ստեղծման գործում, չնչին բացառություններով, իրենց ավանդն են ներդնում ներկայիս Ադրբեջանի «գրական մշակույթի» քիչ թե շատ հայտնի դեմքերը:

Այդ կերպարն արծարծվում է ադրբեջանական ԶԼՄ կողմից՝ հաստատուն տեղ գրավելով դպրոցական դասագրքերում, ստանալով նոր արժեքային որակներ և մեկնաբանություններ: Այսպես կոչված «ատելության լեզվի» տարածումը, դրա չարաշահումն Ադրբեջանում իրականացվում են մի քանի մակարդակներով:

Առաջին տեղում են ադրբեջանական իշխանությունների ռազմամոլ և շովինիստական հայտարարությունները, որոնք խրախուսական ներգործություն են ունենում մյուս մակարդակների վրա: Նման հռետորաբանության շահագործումը դարձել է երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական ճգնաժամից հասարակության ուշադրությունը շեղելու շահեկան միջոց, իսկ դրդապատճառների շարքում կրկին մատնանշվում է «հայկական հետքը»: Ժամանակակից Ադրբեջանի քաղաքականության բաղկացուցիչ մասն են դարձել քաղաքական հակառակորդներին, իրավապաշտպաններին հայկական ծագման մեջ մեղադրելը և վարկաբեկելը, նույնիսկ այս առնչությամբ նրանց դեմ դատական գործեր հարուցելը[1]: Թշնամու գաղափարի շահարկումն, այսպիսով, ներկայիս Ադրբեջանի կառավարող շրջաններն օգտագործում են որպես համոզիչ փաստարկ երկրում գոյություն ունեցող ճգնաժամային երևույթների բացատրության ժամանակ, հատկապես Ղարաբաղյան հիմնահարցի չկարգավորման պայմաններում, փաստորեն զոմբիացման ենթարկելով սեփական բնակչությանը[2]:

Երկրորդ մակարդակում է ԶԼՄ միջոցով իրականացվող քարոզչությունը, երբ ամենօրյա հրապարակումներում և եթերում հակահայկական տրամադրությունները, եթե կարելի է այդպես բնորոշել, պահվում են «թարմ վիճակում»: Ներկայումս ադրբեջանական բոլոր թերթերում հազվադեպ են հանդիպում համարներ, որտեղ որևէ կերպ չի հիշատակվում կամ հղում չի կատարվում թշնամի հայերի մասին:

Հաջորդը առավել վտանգավոր և հեռահար նպատակներ հետապնդող դպրոցական, մասնավորապես՝ հումանիտար առարկաների դասավանդման համար նախատեսված դա-

[1] Акция еженедельная газета, 06. 03. 1999, Зеркало, 30. 04. 2003, Ени Мусават, 01. 10. 2003, Azadliq, 03.07.1998.

[2] Рахман Бадалов, Смена идеологических ориентиров и карабахский конфликт Karabağ: dün, bügün, yarın, Baku, 2003, сс. 205-206.

սագրքերում բացահայտ և քստմնելի հակահայկական քարոզչությունն է: Դրանցում զետեղված տեղեկատվությունը որևէ քննություն չի բռնում պատմական օբյեկտիվության տեսակետից, այն միայն ադրբեջանական քաղաքական կյանքում հաստատուն տեղ գրաված կեղծիքի դաժան արտացոլանքն է: Երիտասարդ ադրբեջանցիների շրջանում հայի՝ որպես թշնամու, կերպարի ստեղծման աղաղակող վկայություններից է դեռ 1992թ. Բաքվի ռադիոյի միջոցով հեքիաթների շարքի հաղորդումը, որտեղ երեխաներին հորդորվում էր «լսել մեծերին՝ հայերի ձեռքը չընկնելու համար»[1]:

Պարբերաբար հրատարակվում և այլալեզու լսարանի համար հրապարակ են նետվում անցյալում լույս տեսած և մեծ մասամբ շովինիստական բնույթի հրապարակումներ: Էթնիկ պատկանելության վրա հասարակության ուշադրությունը սևեռելու (հիմնականում քաղաքական և նախընտրական պայքարում) վարկաբեկիչ փաստ է քաղաքական հակառակորդների հայկական կամ քրդական ծագման հիշատակումը: Ժամանակակից Ադրբեջանում այս հիմնախնդիրն առավել սուր և բացասական դրսևորումներ է ստացել:

Հենց ադրբեջանցի հեղինակների վկայմամբ, ցանկացած հայի որպես «թշնամի» ներկայացնելը փաստորեն Ադրբեջանում հայտարարվում է էթնիկական պատերազմ, ինչը բոլորովին չի համապատասխանում ԼՂ հայ բնակչությանը քարոզչական նպատակներով ինքնավարություն խոստանալու և նրանց Ադրբեջանի քաղաքացիներ ճանաչելու Ադրբեջանի հայտարարություններին[2]:

Արտասահմանում ադրբեջանական քարոզչության հիմնական մակարդակները հետևյալն են.

1. միջազգային կազմակերպություններում ադրբեջանական պատվիրակությունների, արտասահմանում գործող ադրբեջանական դեսպանատների միջոցով քարոզչական աշխատանքի կազմակերպում, Ադրբեջանում հավատարմագրված արտասահմանյան երկրների դեսպանների և ներկայացուցիչների ներգրավում: Ներկայումս արտասահմանում գործում են ադրբեջանական շուրջ 40 դիվանագիտական ներկայացուցչություններ, այդ թվում՝ 29 դեսպանատներ, դեսպանատներին կից 2 ներկայացուցչություններ, 4 ներկայացուցչություններ միջազգային կազմակերպություններին կից և 1 պատվավոր հյուպատոսություն: Բոլորովին վերջերս որոշում կայացվեց 12 նոր դեսպանատների և 1 գլխավոր հյուպատոսարանի բացման մասին: 2004թ. օգոստոսին դեսպանատուն բացվեց նաև Հունգարիայում, որն առաջին հերթին Գուրգեն Մարգարյանի սպանության գործով դատական գործընթացում քարոզչություն իրականացնելու նպատակ ուներ,
2. արտասահմանում ուսանող կամ աշխատող ադրբեջանցիների միջոցով Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ քարոզչություն իրականացնելու միջոցառումների իրականացումը՝ դրանք կազմակերպելով և ուղղորդելով Բաքվից,
3. միջազգային տարատեսակ հանդիպումներում ադրբեջանական տեսակետների ներ-

[1] Ազգ, 15. 10. 1992.
[2] Նույն տեղում:

կայացում՝ փորձելով առաջ մղել ադրբեջանական տեսակետը: Սովորաբար նման պատվիրակությունների կազմում ընդգրկված են լինում հատուկ ծառայությունների ներկայացուցիչներ կամ որոշակի երկրում, դեսպանատան առկայության պայմաններում, ադրբեջանական պատվիրակները գտնվում են դեսպանատան աշխատակիցների ուշադրության ներքո,

4. նման աշխատառճին հարիր քայլերի նախաձեռնում նաև միջազգային հեղինակավոր կազմակերպություններում: Սովորաբար դրանք զերծ չեն լինում, այսպես կոչված, «սև քարոզչության» տարրերից և կեղծում են փաստերը, դեպքերն ու անունները: Նման փաստաթղթի օրինակ կարող են հանդիսանալ ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովում Ադրբեջանի պատվիրակ Ռաֆայիլ Հուսեյնովի տարածած նյութերը, որոնք միտված էին հեղինակազրկել Հայաստանի Հանրապետությունը միջազգային հանրության առջև[1]:

1.2. Ադրբեջանական ապատեղեկատվության տարատեսակները

Քարոզչական պատերազմ իրականացնելիս Ադրբեջանը մեծապես կիրառում է ապատեղեկատվության տարածումը: Ղարաբաղյան պատերազմի ընթացքում ադրբեջանական ապատեղեկատվությունն արտաքին լսարանում իրականացվում էր արտասահմանյան մամուլի համար ադրբեջանցի լրագրողների պատրաստած հոդվածների միջոցով: Այսպես, օրինակ, «Նեզավիսիմայա գազետայի» թղթակիցներ Գաֆառլիի և Մեհտիևի հոդվածներում ապատեղեկատվությունը հիմնականում վերաբերում էր ռազմական գործողություններում հայկական ուժերի կորուստների քանակին, հայկական կողմից արգելված զինատեսակների օգտագործմանը, ինչպես նաև վարձկանների ներգրավման մասին կեղծ տեղեկություններին:

Ապատեղեկատվության տարատեսակներից են.

- վարկաբեկիչ բնույթի ապատեղեկացնող հաղորդագրություններ և դրանց տարածում: Օրինակ, Լիբանանի նախկին վարչապետ Հարիրիի սպանությունը ՀՅԴ-ին վերագրելը[2], կամ, ասենք, ՀՀ և ԼՂՀ տարածքներում իբր գոյություն ունեցող ադրբեջանցի ռազմագերիների համակենտրոնացման ճամբարների մասին պարբերաբար հիշատակումները[3],
- շփոթեցնող, ապակողմնորոշող տեղեկատվություն: Օրինակ, մեջբերվում են հայկական անանուն երիտասարդական կազմակերպության անանուն ղեկավարի խոսքերը Հայաստանում Ուկրաինայի օրինակով երիտասարդական շարժում սկսելու վերաբերյալ և այլն[4]:

Ապատեղեկատվության տարածման մեջ մասնագիտացել են որոշ ադրբեջանցի թղթակիցներ, որոնց թվում առանձնակի ակտիվությամբ աչքի է ընկնում Ռովշան Նովրուզօղլին: Նրա ղեկավարած, այսպես կոչված, «Տեղեկատվության բանկը», որը բացարձակ

[1] Տե՛ս Зеркало, 22. 06. 2005.
[2] Зеркало, 01. 03. 2005, «Армянский след» в ставропольских терактах, Эхо, # 243(735), 24 декабря 2003.
[3] www.day.az/news/armenia/20792. html
[4] www.day.az/news/armenia/20990. html

կեղծիք և ապատեղեկատվություն տարածելու հարուստ փորձ է կուտակել, մշտական «տեղ է զբաղեցնում» Բաքվի «Զերկալո» օրաթերթի էջերում: Որպես կանոն՝ այս հեղինակի ապատեղեկատվական հնարքները հանգում են մոտավոր ճշմարտության, իրական և հնարովի անձանց մասին, ինչպես նաև հնարովի «բացառիկ» տեղեկություններով համեմված նյութերի պատրաստմանը, ինչի նպատակը մի կողմից՝ «հայկական դավադրությունը» բացահայտողի կերպար ստեղծելն է, ադրբեջանական հատուկ ծառայությունների «անխոնջ» աշխատանքի արդյունավետությունը մատնացույց անելը, մյուս կողմից էլ բացատրությունների մղել հիշյալ նյութերում ընդգրկված անձանց՝ իրենց վերագրվող կեղծիքը հերքելու համար:

Ապատեղեկատվական հնարքներից է նաև որոշակի փաստի հետագա ընթացքի հորինումը: Այսպես, օրինակ, Հունգարիայի հայկական համայնքի՝ Հունգարիայի գլխավոր դատախազին ուղղած նամակը (որում հայ համայնքի ներկայացուցիչները մտահոգություն էին հայտնում Գ.Մարգարյանի սպանության գործով դատավարության ժամանակ ադրբեջանական լրագրողների կողմից քարոզչական նյութերի տարածման հետ կապված) պատճառ հանդիսացավ, որպեսզի ադրբեջանական մամուլում հայտնվի ստահոդ մի տեղեկություն այն մասին, թե Հունգարիայի հայերի երիտասարդական «Հայաստան» կազմակերպության անդամները կոչ են արել հունգարական դատարանին մեղադրյալին հանձնել հայկական կողմին՝ մահապատժի ենթարկելու համար: Այսպիսով, կոնկրետ փաստի, տվյալ դեպքում՝ Հունգարիայի դատախազությանն ուղղված նամակի շուրջ հաջորդիվ կազմա-կերպվում և տարածվում է մտացածին ապատեղեկատվություն:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում կրակագծում հաճախ իրականում տեղի չունեցող իրադարձությունների լուսաբանումը ադրբեջանական ԶԼՄ-ի կողմից: Հիմնական նպատակը հայկական զինուժի կողմից հրադադարի խախտման մասին հիշատակումն է: Որպես կանոն՝ սովորաբար մտացածին լուրերի հաղորդումն ավարտվում է **«Հակադարձ կրակով թշնամին ճնշվել է»** ձևակերպմամբ: Սա յուրօրինակ դրական հոգեբանական ազդեցություն է թողնում նաև ադրբեջանական հասարակության վրա:

Ապատեղեկատվության առանձին դրսևորումներից են հայկական կողմի հասցեին հնչող մեղադրանքները ԼՂՀ և հարակից շրջաններում թմրանյութերի լաբորատորիաների, ահաբեկչական խմբավորումների հենակետերի տեղաբաշխման մասին: Տարբեր մեղադրանքներ են հրապարակվում կենսաբանական զենքի առկայության, ինչպես նաև միջուկային թափոններով շրջակա միջավայրն աղտոտելու դիտավորության վերաբերյալ:

Ադրբեջանում տեղեկատվական պատերազմների մասնագետները հատուկ կարևորություն են տալիս ինֆորմացիոն տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառմանը, մասնավորապես՝ համակարգչային տեխնոլոգիաների և Համացանցի միջոցով հակահայկական քարոզչություն իրականացնելու համար: Առանձին կարևորություն է տրվում Համացանցում ադրբեջանական քարոզչական ռեսուրսների հարստացման աշխատանքներին: Հակասությունների հրահրման դաշտ են դիտարկվում, օրինակ, Արցախ-Հայաստան հարաբերությունների ոլորտը, առկա սոցիալական հակասությունները, կոռուպցիան, աղքատությունը,

ինչպես նաև այլադավան, տվյալ դեպքում՝ առաքելական և կաթոլիկ ուղղություններին պատկանող հայերի միջև հակասությունների բորբոքումը[1]:

Ղարաբաղյան պատերազմի տարիներին ադրբեջանական կողմը կատարել է նաև հայերեն թռուցիկների տարածման փորձեր, որոնց նպատակն է քայքայել հայ զինվորների մարտական ոգին, պարտվողական տրամադրություններ սերմանել նրանց մեջ:

Տեղեկատվական պատերազմներ իրականացնելու առաջարկներով հանդես է գալիս նաև Էլշադ Գուլիևը՝ Ադրբեջանի հեռուստառադիոպետկոմի նախկին ղեկավարը 1978-1990թթ.: Նա առաջարկում էր մշակել հրապարակման ոչ ենթակա կամ մասամբ գաղտնազերծված տեղեկատվական պատերազմ վարելու հայեցակարգ, զարգացնել նախկին խորհրդային շրջանին հատուկ՝ հեռուստատեսության և ռադիոյի միջոցով տարվող քարոզչություն[2]:

Ադրբեջանական կողմը միջազգային ատյանների առջև մեղադրանքներ է ներկայացնում Հայաստանի Հանրապետությանը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող ՄԱԿ չորս բանաձևերի պահանջներն անտեսելու վերաբերյալ: Այդ բանաձևերում Հայաստանի Հանրապետության նկատմամբ որևէ պարտադիր պահանջի բացակայությունն ադրբեջանական կողմն անտեսում է, այնինչ նույն բանաձևերը որոշակի պարտավորություններ են դնում հենց ադրբեջանական կողմի վրա, ինչը նույնպես միտումնավոր կերպով անտեսվում է: ՄԱԿ բանաձևերի պահանջները չկատարելու բացահայտ հայտարարություն է արել Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիևը[3]:

Քարոզչական հնարքներից է նաև տարբեր լսարաններում ԼՂ հայերի ինքնորոշման օրինականության վերաբերյալ հարցի բարձրացումը: Բանեցվում է հետևյալ քարոզչական ծուղակը. եթե հարցապնդմանը տրվում է դրական պատասխան, հետևում է հետևյալ հարցը. այդ դեպքում, ի՞նչ է, հայերը պետականություն ստեղծելու իրավունք ունեն Գլենդելո՞ւմ, Ֆրանսիայո՞ւմ և Հյուսիսային Կովկասո՞ւմ: Հայկական կողմը մեղադրվում է «Մեծ Հայաստանի» ստեղծման գաղափարի համար[4]:

Որպես նման կարգի մեղադրանքներին համարժեք պատասխան պետք է մատնացույց արվի այն, որ ադրբեջանական կողմը չի տիրապետում պատմական գրականությանը, քանզի «Մեծ Հայք» եզրն ունի հունահռոմեական ծագում և անվանվում էր այդպես՝ «Փոքր Հայքի» գոյության պարագայում:

Առավել հաճախ կրկնվող մյուս քարոզչաեղանակը հայ քաղաքական գործիչներին ահաբեկիչներ, անջատողականներ և պատերազմի հանցագործներ ներկայացնելն է[5]: Ադրբեջանական պետական քարոզչամեքենան փորձում է նման պիտակավորումներով բացառել հանցագործների հետ որևէ բանակցության անցկացման հնարավորությունը:

1.3. Ղարաբաղյան հիմնահարցի իրավական կողմը

Ադրբեջանական քարոզչությունը Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման հիմնա-

[1] Etibar Axundov, Informasiya müharibəsi haqqında mülahizələr, Karabağ: dün, bügün, yarın, Baku, 2003, s. 47.
[2] Эльшад Гулиев, Концепция информационной войны, Эхо,17. 03. 2001.
[3] Տեղեկությունը՝ Վլադիմիր Կազիմիրովից:
[4] А.Дашдамиров, Идеологические проблемы межкавказских отношений, Баку, 2001, с. 35, 43.
[5] Джангир Арас, Кто есть кто в четвертой мировой войне, Баку, 2005.

կան շեշտը դնում է տարածքային անձեռնմխելիության սկզբունքի վրա և առաջ է քաշում հետևյալ ելակետերը.

- ԽՍՀՄ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի հետ ԼՂ վերամիավորումն անհնար է: Այդ հոդվածով որևէ տարածքային փոխանակում ենթադրում է կողմերի երկուստեք համաձայնություն և միութենական իշխանությունների կողմից նման համաձայնության օրինականացում,
- Ղարաբաղյան հարցում տարածքային վերաձևումների անհամապատասխանությունը ԱՊՀ հիմնադիր համաձայնագրին, որտեղ ևս շեշտը դրվում է տարածքային անձեռնմխելիության սկզբունքի վրա,
- ՄԱԿ և ԵԱՀԿ որոշումների և սկզբունքների կիրառումը Ղարաբաղյան հիմնահարցի պարագայում՝ շեշտը դնելով այն դրույթի վրա, որ բոլոր այն պետությունները, որոնք դարձել են ՄԱԿ և ԵԱՀԿ անդամ, պարտավորվում են հարգել պետությունների տարածքային անձեռնմխելիության իրավունքը: Այս եղանակով ադրբեջանական կողմը փորձում է Հայաստանի Հանրապետությունը ներկայացնել որպես հակամարտության կողմ՝ վերջինիս մեղադրելով զավթողական քաղաքականության մեջ:

Հիմնահարցի շուրջ արդյունավետ քարոզչական աշխատանքներ իրականացնելու տեսակետից խիստ շահեկան են պրոֆեսոր Ա.Մանասյանի հրապարակումները, հատկապես Ղարաբաղյան հիմնահարցի «իրավական փաթեթը»: Հեղինակը հանգամանալի և համոզիչ կերպով վերլուծում է ադրբեջանական և խորհրդային օրենքների հակասություններն ու դրանց ընդունման տրամաբանությունը[1]:

Այս փաթեթի կարևոր կռվաններից է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1990թ. ապրիլի 3-ին ընդունած «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքը, որում ամրագրված է. «Ինքնավար հանրապետությունների և ինքնավար կազմավորումների ժողովուրդներին իրավունք է վերապահվում ինքնուրույն որոշում կայացնել ԽՍՀՄ կազմում կամ վերջինիս կազմից դուրս եկող միութենական հանրապետության կազմում մնալու, ինչպես նաև սեփական պետական-իրավական կարգավիճակի շուրջ[2]:

Կարևոր փաստարկներից է նաև Ադրբեջանի Հանրապետության 1991թ. հոկտեմբերի 18-ին ընդունած պետական անկախության մասին որոշումը: Դա, փաստորեն, ԽՍՀՄ գոյության պայմաններում համարժեք էր նրա կազմից դուրս գալուն, քանզի իրավական տեսանկյունից Խորհրդային Միությունը դադարեց գոյություն ունենալ նույն թվականի դեկտեմբերին միայն: Այսպիսով, հրաժարվելով Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը լինելուց և հռչակելով 1918-1920թթ. Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության վերականգնումը՝ Ադրբեջանը, փաստորեն, կորցրեց Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հանդեպ Կովբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ, ինչպես նաև Մոսկվայի և Կարսի պայմանագրերով վե-

[1] А. Манасян, Карабахский конфликт: ключевые понятия и хроника, «Нораванк», Ереван, 2005.
[2] А. Манасян, Карабахский конфликт. Международно признанные основания проблемы. Открытая папка правовых документов, Ереван, 2004, сс. 28-31.

բապահված իրավասությունները[1]:

Այս տեսակետից հայկական կողմի համար հիմնավոր փաստարկներ կարող են հանդիսանալ հետևյալ դրույթները.

ա. 1991թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, մինչ Ադրբեջանի Հանրապետությունը կճանաչվեր միջազգային հանրության կողմից, ԼՂՀ-ն կայացել է այն տարածքների վրա, որոնց նկատմամբ Ադրբեջանը որևէ իրավասություն չի ունեցել,

բ. Նախիջևանի ԻՀ, ինչպես նաև ԼՂՀ հարակից տարածքները համարվում են Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքներ[2]:

Հայկական կողմի համար միջազգային ատյաններում դիվանագիտական և լոբբիստական աշխատանք իրականացնելու լուրջ հաղթաթուղթ են հակամարտության սկզբնական շրջանում Եվրոպական խորհրդարանի և ԱՄՆ Կոնգրեսի ընդունած որոշումները: Ցավոք, մեզանում կա՛մ բոլորովին մոռացության է ենթարկվել այս որոշումների կարևորությունը, կա՛մ էլ ուղղակի անտեսվում է դրանց նշանակությունը քարոզչական աշխատանքներում:

Այսպես, ԱՄՆ Կոնգրեսի 1988թ. հուլիսին ընդունած բանաձևում նշվում են հետևյալ երեք հիմնական դրույթները.

1. խորհրդային կառավարությունը պետք է հարգի հայ ժողովրդի օրինական ձգտումները,
2. խորհրդային կառավարությունը պետք է դադարեցնի հայ ժողովրդի իրավունքների լուրջ խախտումները,
3. եթե Խորհրդային Միությունը շարունակի հայ ժողովրդի հանդեպ իրականացվող ճնշումները, ապա դա անխուսափելիորեն կազդի ԱՄՆ-ԽՍՀՄ հարաբերությունների վրա[3]:

Հայկական կողմի համար շահեկան են նաև 1989թ. հուլիսի 19-ին և նոյեմբերի 19-ին ԱՄՆ Սենատի՝ Ղարաբաղյան հիմնախնդրի մասին ընդունած որոշումները: Դրանցում խորհրդային ղեկավարությանն ուղղակիորեն կոչ է արվում երաշխավորել հայ բնակչության անվտանգությունը և հաշվի նստել հայկական ժողովրդավարական շարժման հետ:

Նման բովանդակություն են պարունակում նաև 1988թ. Եվրոպական խորհրդարանի ընդունած որոշումները: Ըստ 1988թ. հուլիսին ընդունված բանաձևի առաջին երկու կետերի՝

1. դատապարտվում էին հայերի հանդեպ Ադրբեջանում տեղի ունեցած բռնությունները,
2. սատարվում էր հայ փոքրամասնության՝ Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորվելու պահանջը[4]:

Այս որոշումները, թերևս, կարևոր են հատկապես Արևմուտքի նախնական և ներկայիս դիրքորոշումների խիստ բևեռացման վրա ուշադրություն հրավիրելու առումով և կարող են դիտարկվել նաև որպես Ղարաբաղյան հիմնահարցում երկակի քաղաքականություն վարելու դասական օրինակներ:

[1] Նույն տեղում, էջ 34-35:
[2] А. Манасян, Карабахский конфликт: ключевые понятия и хроника, с. 34.
[3] Congressional Record. Proceeding and Debates of the 100th Congress Second Session, Volume 134 – Part 13, July 13, 1988 to July 27, 1988, Washington, 1988, pp. 18970-18972.
[4] Official Journal of the European Communities, No. C 94/117, July, 1988.

2. Հակահայկական քարոզչական գործունեությունն Ադրբեջանում

Ներկայումս Ադրբեջանում հրատարակվող գրականության ստվար հատվածն ուղղված է հակահայկական քարոզչություն իրականացնելուն: Դրանք տպագրվում են թե՛ մասնավոր և թե՛ ակադեմիական շրջանակների կողմից՝ վայելելով պետական, մասնավորապես՝ ազգային անվտանգության նախարարության ֆինանսական աջակցությունը: Վերջինս նույնիսկ սահմանել է խրախուսական մրցանակներ լավագույն հակահայկական հրապարակումների համար[1]: Այսպիսի համակարգումը նպատակ է հետապնդում, առաջին հերթին, ավելի արդյունավետ դարձնել հակահայկական քարոզչությունը, ապահովել այն հաստատուն ֆինանսական հոսքով և դարձնել վերահսկելի:

2.1. Հակահայ քարոզչական գրահրատարակություն

2005թ. Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության իրականացրած Սամիր Ասկերխանովի անվանական մրցանակաբաշխության հիմնական թիրախը դարձյալ հայկական կողմն էր: Բավական է ծանոթանալ ներկայացված անվանակարգերով մրցանակների վերնագրերին՝ դրանում համոզվելու համար: Այսպես, մրցանակաբաշխության արարողության բացման ժամանակ ԱԱՆ փոխնախարար Ալի Նագիևը նշեց, որ մրցույթի անցկացման նպատակն, առաջին հերթին, ադրբեջանական իրականությունը միջազգային հանրությանը ներկայացնելն է[2]: Նույն նախարարության վարչության պետ Մամեդ Ջաֆարլին հետևյալ կերպ բնորոշեց մրցույթի նպատակը. «Գիտության և մշակույթի, ստեղծագործական ընկերությունների և անհատների ակտիվացումը և նրանց գործունեության խթանումը, միջազգային ահաբեկչության և կազմակերպված հանցավորության, այդ թվում հայկական ահաբեկչության և զինված անջատողականության դեմ պայքար»[3]: «Լրագրողական աշխատանք, գիտական հետազոտություն և ժամանակակից տեղեկատվական քարոզչություն», ինչպես նաև «Կինո և կերպարվեստ» անվանակարգերում ընդգրկված բոլոր աշխատանքները հակահայկական բնույթ ունեին և հիմնականում վերաբերում էին ղարաբաղյան թեմային:

Ադրբեջանում հրատարակվող հակահայ գրականության վերնագրերն ինքնին խոսուն են և հենց հայկական կողմից կարող են մատուցվել միջազգային դիտորդական պատվիրակություններին՝ որպես հակահայ քարոզչության ապացույց[4]:

Հակահայ գրականության հրատարակումն Ադրբեջանում սկիզբ է առել Ղարաբաղյան

[1] Օրինակ՝ Преступление армянских террористических и бандитских формирований против человечества (19-20вв.), Баку, 2004, գիրքն արժանացավ Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության խրախուսական մրցանակին ($2000): Տե՛ս «Зеркало», 19, 03, 2004.
[2] МНБ наградило победителей конкурса на премию имени Самира Аскерханова, «Зеркало», 09.07.2005.
[3] Там же.
[4] Т.Айдамиров, Х. Гасымов, Большие амбиции малого этноса. Нурлан, Баку, 2003, Б. Наджафов, Лицо врага. История армянского национализма в Закавказье в конце 19-го-начале 20-го веков, Баку, 1993, Новрузоглы Р., Угроза азербайджанскому государству в XXI веке, I том, Баку, НУР-А, 2004 (азерб.), Сэмуэл А. Уизм, Армения – скрытый представитель «христианского террористического государства, Баку, Элм, 2004, (азерб.), «Армянский геноцид»: миф и реальность, Баку, 1992, Сабир Асадов, Терроризм. Причина и следствие, Баку, 2001, Сабир Асадов, Миф о «Великой» Армении, Баку, 1999, Х.Ю.Вердиева, Переселенческая политика Российской империи в Северном Азербайджане, Баку, 1999, Историческая география Западного Азербайджана, сост. Сабир Асадов, Баку, 1998.

շարժման օրերին: Առաջին ձեռնարկներից մեկը Սաբիր Ասադովի կազմած կոմպիլյացիոն ժողովածուն է, որում հավաքվել և ինքնահրատ (սամիզդատ) տարբերակով տարածվել էին հակահայկական բնույթի մեջբերումներ ու հատվածներ շովինիստական բնույթի հրապարակումներից, պատմական աղբյուրներից և գեղարվեստական գրականությունից[1]: Դրանք 1988թ. նույնիսկ հատվածաբար եթեր են հեռարձակվել «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական բաժնի կողմից՝ հանդիպելով հայկական կողմի հակազդեցությանը:

Այդ մեջբերումներն ու հղումները պարբերաբար թարմացվում են նոր «բացահայտումներով» և առատորեն օգտագործվում են ինչպես պարբերական մամուլի, այնպես էլ էլեկտրոնային տարբերակով (Համացանց)[2]:

Վերահրատարակվում են նաև հակահայկական բովանդակությամբ կամ էլ ադրբեջանամետ տեսակետներ պարունակող գրքերը (օրինակ՝ Վ.Վելիչկոյի, Վ.Գրիբոյեդովի, Ս.Գլինկայի, Մ.Ֆայգլի, նույնիսկ Հ.Քաջազնունու և այլոց գործերը), որոնք մեկնաբանվում կամ ներկայացվում են ադրբեջանական քարոզչական դիրքերից:

Հակահայկական գրականության հրատարակմանն աջակցում են նաև պետական մարմինները, մասնավորապես՝ ադրբեջանական ԱԳՆ-ն: Դեռևս 1994թ. վերջինս պատրաստել էր տեղեկագրեր տարբեր միջազգային ատյաններում շրջանառության մեջ դնելու համար, որոնք զետեղվել են նաև առանձին գրքույկում[3]: Դրանք պարունակում են հայոց պատմության խեղաթյուրված մեկնաբանություններ, Ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ ադրբեջանական տեսակետներ, ինչպես նաև հայկական կողմի գործողությունները միակողմանի ներկայացնող նյութեր: Գրքույկն ուղարկվել է արտասահմանյան բազմաթիվ գրադարանների:

Մեծ տեղ է հատկացվում օտարալեզու և այլազգի հեղինակների գրքերի հրատարակմանը, որն իրականացվում է պետական հովանավորությամբ: Այդ հեղինակների գործունեությունը լայնորեն լուսաբանվում է ադրբեջանական մամուլում[4]: Առանձին դեպքերում մամուլի միջոցով բազմացվում են նոր լույս տեսած և քարոզչական նպատակներ հետապնդող հրատարակություններ:

Հաշվի առնելով ադրբեջանական հրապարակումների խիստ հակահայկական, անհանդուրժողական և ռասիստական բնույթը՝ հայկական կողմը պետք է միջազգային դիտորդական առաքելությունների ուշադրությունը սևեռի այդ հրապարակումների վրա կամ հարց բարձրացնի դրանց և հատկապես դպրոցական դասագրքերի բովանդակության մոնիթորինգի անցկացման՝ որպես հակամարտության լուծման կարևոր բաղադրիչի, անհրաժեշտության վերաբերյալ:

[1] Հեղինակը ծանոթացել է այդ նյութերին Բաց հասարակության արխիվներում, Բուդապեշտ, Կենտրոնաեվրոպական համալսարան:
[2] Վերջին հրապարակումների հավաքածուն տեղ է գտել Turk Duniyasi, Baku, 2004. ադրբեջանալեզու գրքում:
[3] Տե ս The Aggression of the Republic of Armenia Against the Azerbaijani Republic, Baku, 1994.
[4] Տատյանա Չալաձեն, օրինակ, որը նախկինում Լիտվայի քաղաքացի էր, ներկայումս՝ Ադրբեջանի Փախստականների և բռնագաղթածների վարչության պետը, հեղինակել է գրքեր ղարաբաղյան պատերազմի, Խոջալուի դեպքերի և ադրբեջանական բանակի մասին՝ թերևս, ունենալով ադրբեջանական բանակի ղեկավարության հովանավորությունը: Վերջին հրապարակումներից է Cebhe albomu, Baku, 2004 գիրքը, որտեղ զետեղված են ղարաբաղյան պատերազմին և ներկայիս ադրբեջանական բանակին վերաբերող լուսանկարչական նյութեր:

Մեզ հասանելի ադրբեջանական դպրոցական, մասնավորապես՝ պատմության դասագրքերի բովանդակության դիտարկումները բերում են այն համոզմանը, որ Ադրբեջանում, ի դեմս հայի, ստեղծվում է խիստ բացասականացված թշնամու կերպար: Այդ դասագրքերում հայը ներկայացվում է որպես ադրբեջանցիների պատմական և ոխերիմ թշնամի: Շատ դեպքերում նույնիսկ աղաղակող կեղծ և հնարովի պատմություններ են տեղադրվում, որոնց նպատակն է երիտասարդ ադրբեջանցիների մեջ ձևավորել հայերի՝ որպես միայն թշնամու հաստատուն կերպար:

Բերենք խոսուն մի օրինակ 2002թ. Բաքվում լույս տեսած 11-րդ դասարանի պատմության դասագրքից (խմբագիրներ՝ պրոֆեսորներ Ս.Գանդիլով և Ի.Մամեդով). «Դժվար է պատկերացնել, թե որքան են հայերն ատում թուրքերին: Հայերը «Սթինգեր» հրթիռով խփեցին Իլ–76 ինքնաթիռը, որն օգնության էր շտապում Հայաստանի երկրաշարժից տուժած շրջաններին: Խփվեց նաև Հարավսլավիայից երկրաշարժի գոտի ուղևորվող ինքնաթիռը, որը սխալմամբ թուրքական էր համարվել»[1]:

Լեռնային Ղարաբաղի պատմության խեղաթյուրված խմբագրումներից մեկում ասվում է. «...Հայկական պատմագիտության մեջ, վաղ միջնադարյան հայկական աղբյուրների, ինչպես նաև սոսկ մի քանի անտիկ հեղինակների աշխատությունների հիման վրա, որոնք ոչ միշտ էին լավ կողմնորոշվում Կովկասի քաղաքական իրադրության մեջ ու էթնոտեղագրական անվանումներում և գտնվում էին իրենց հայ տեղեկատուների ազդեցության տակ, գոյություն ունի կարծիք, համաձայն որի Լեռնային Ղարաբաղի տարածքը... հին և միջին դարերում կազմել է... Մեծ Հայքի մասը»[2]:

Հայկական կողմի հակաքարոզչության նպատակը հիմնականում պետք է լինի ադրբեջանական քարոզիչների թույլ տված բացթողումների, կոպիտ սխալների և զեղծարարության փաստերի վերհանումն ու դրանց հակադարձ կիրառումը:

Վերջին տարիներին Ադրբեջանի կողմից տարբեր միջազգային գիտաժողովներին և սեմինարներին մասնակցել և անգլերեն զեկույցներով ու հոդվածներով հանդես են եկել ՌԴ-ում Ադրբեջանի առաջին դեսպան Հիքմեթ Հաջիզադեն, Նասիբ Նասիբլին, Ֆարիզ Իսմայիլզադեն և ուրիշներ: Նրանց զեկույցները բացահայտ հակահայկական ուղղվածություն են ունեցել: Ադրբեջանական օտարալեզու գիտնականների «համայնքն» ընդլայնվում է, ինչի արդյունքում հակահայկական քարոզչությունն ավելի ու ավելի է ծավալվում արտասահմանյան ինտելեկտուալ շրջանակներում: Նման հեռահար քաղաքական նպատակների իրականացման համար մեծ աջակցություն է ցուցաբերվում արտասահման ուսումնառության մեկնած ուսանողներին: Ստեղծվում են գիտակրթական հիմնադրամներ այդ ուսանողներին սատարելու համար: Այդպիսի կրթաթոշակային հիմնադրամներից է Երիտասարդ առաջնորդների հիմնադրամը, որի կենտրոնական գրասենյակը գտնվում է Բաքվում (կառավարիչ՝ Ֆարիզ Իսմայիլզադե)[3]:

[1] История Азербайджана, учебник истории для 11-го класса, под редакцией проф. С.Гандилова и проф. Мамедова И., Баку, 2002, с. 270.
[2] Карабах. Очерки истории и культуры Институт археологии и этнографии НАНА, Чашиоглу, Баку, 2004, с. 26.
[3] Baku Today, 20. 01. 2004.

2.2. Այլ քարոզչաեղանակներ

Հակահայկական քարոզչությունն Ադրբեջանում, բացի գրահրատարակությունից, տեղեկատվական ոլորտում և միջազգային ատյաններում տարվող աշխատանքներից, ներառում է նաև արտաքին ու ներքին լսարաններին ուղղված և հիմնականում բացահայտ, ինչպես նաև քողարկված հակահայկական ուղերձներ պարունակող նախաձեռնություններ։

Դա, առաջին հերթին, վերաբերում է, այսպես կոչված, նոր «հիշողության վայրերի» ստեղծմանը. հուշարձաններ, կոթողներ և այլն, որոնք կրում են հակահայկական քարոզչության որոշակի տարրեր։ Այդպիսին է, օրինակ, Շեհիդների ծառուղին, որը հիմնվել է 1990թ. հունվարյան դեպքերից հետո, նախկին Կիրովի այգում։ Թեև զոհվածների թիվը չէր գերազանցում 100-ը, հատուկ դիտավորությամբ փորվել էին 1000 գերեզմանափոսեր։ Շեհիդների ծառուղու տարածքում, բացի ղարաբաղյան պատերազմում զոհված ադրբեջանցիների գերեզմաններից, գտնվում են նաև ադրբեջանցիների ցեղասպանության, 1918թ. Բաքվի գրավման ժամանակ զոհված թուրք զինվորների հիշատակը հավերժացնող, Բաքվի պաշարման ժամանակ զոհված բրիտանացի զինվորականների հուշակոթողները[1], ինչպես նաև Հեյդար Ալիևի և նրա կնոջ գերեզմանները։

Ադրբեջան պաշտոնական այցերի արարողակարգում ընդգրկված է այցելությունը Շեհիդների ծառուղի՝ ներառյալ զոհվածների հուշակոթողներին պսակներ դնելու արարողությունը։

Բաքվում բացվել է հուշարձան՝ նվիրված, այսպես կոչված, «Խոջալուի ցեղասպանության» զոհերի հիշատակին։ Ադրբեջանական մամուլում նյութեր են հրապարակվել Բաքվի հայկական եկեղեցին «Մարդկության դեմ հայկական ահաբեկչության» թանգարանի վերածելու մասին։

Այժմ ադրբեջանական կողմը գործունեություն է ծավալել աշխարհի տարբեր երկրների փողոցներ և հրապարակներ ադրբեջանական կամ այդպիսին համարվող մշակութային և պատմական գործիչների անուններով անվանակոչելու ուղղությամբ։ Հ.Ալիևի կիսանդրիներ են տեղադրվում տարբեր քաղաքներում, նրա կիսանդրին զետեղվում է լեռնագագաթներին և այլն։

Քարոզչական նպատակներով կատարվում է նաև դրոշմանիշերի, դրամների միջոցով Արցախի հայկական պատմամշակութային և այլ արժեքների ադրբեջանականացում և դրանց լայն տարածում։ Նման արժեքների աշխարհագրությունը բավական լայն է և ներառում է ԼՂՀ և հարակից տարածքների հայկական եկեղեցիները, որոնք ներկայացվում են որպես աղվանական հուշարձաններ։ Հայկական կողմից համանման դրոշմանիշերի, բացիկների, հուշադրամների թողարկումը, մանավանդ ԼՂՀ-ի վերաբերյալ մակագրություններով, արդյունավետ կարող է լինել հակաքարոզչության իմաստով։

Հակահայ քարոզչության բացահայտման տեսակետից խիստ հետաքրքրական են

[1] Բրիտանական զինվորականների հուշակոթողի բացումը, որն ակնհայտ քարոզչական բնույթ ուներ և կոչված էր հաճոյանալու բրիտանական կողմին՝ ի դեմս այն ներկայացնող նավթային ընկերությունների, միանշանակ չընդունվեց որոշ ազգայնական շրջանակների կողմից, որոնք հուշակոթողը պղծեցին՝ այն ողողելով նավթով։

ադրբեջանական զինվորական հետախուզության նախկին գործակալ Ալեքպեր Իսմայիլովի տեղեկությունները ադրբեջանական կողմից Հայաստանի Հանրապետության դեմ ծրագրված ահաբեկչական գործողությունների բացահայտման, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի հայաբնակ շրջաններում քարոզչական աշխատանքների և դրանց արդյունքում այլազգի բնակչության մեջ հակահայկական տրամադրություններ սերմանելու մեթոդների բացահայտման մասին:

Այսպես, «Ադրբեջանի կազակների հայրենակցական միության» անվան տակ խափանարար գործողություններ են կիրառվել Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերում, կազակ ատամանների ստորագրությամբ տեղական մամուլում տպագրվել են հակահայկական բնույթի հոդվածներ: Պատրաստվել և տարածվել են հայկական պետական գերատեսչությունների կեղծ պաշտոնական բլանկներ, ինչպես նաև կաթողիկոս Վազգեն Առաջինի ստորագրությունը կրող, իբր «Հարավային Ռուսաստանում» հայկական ծավալապաշտություն քարոզող կեղծ փաստաթղթեր[1]: Պետք է արձանագրել, որ նման քարոզչական աշխատանքը որոշակի արդյունքներ է ունեցել Հարավային Ռուսաստանի կազակ բնակչության, ինչպես նաև ռուսաստանցի պաշտոնատար անձանց շրջանում՝ որոշակի կասկածամտության և հակահայկական տրամադրությունների ամրապնդման առումով[2]:

Ադրբեջանական քարոզչաեղանակների մեկ այլ տարատեսակ է հանրապետության ազգային փոքրամասնություններին քարոզչական նպատակներով օգտագործելու գործելակերպը. մասնավորապես՝ նրանց դրդում են նամակ-կոչերով դիմել տարբեր միջազգային կազմակերպությունների՝ դրանցում նշելով հայկական «ագրեսիվ նկրտումների» մասին: Այս գործելակերպը կիրառվում էր դեռևս խորհրդային տարիներին, երբ կենտրոն էին ուղարկվում համանման դիմումներ Ադրբեջանի ռուսական, հրեական, ուկրաինական, թաթարական և այլ ազգային փոքրամասնությունների անունից[3]:

3. Ադրբեջանական սփյուռքի կառույցների ստեղծման գործընթացը և դրանց ներգրավումը հակահայկական քարոզչության ոլորտ

Անկախության ձեռքբերումից հետո և հատկապես Հ.Ալիևի իշխանության տարիներին Ադրբեջանի իշխանությունները ադրբեջանական սփյուռքի ստեղծման հետևողական քաղաքականություն են իրականացնում: Ադրբեջանական սփյուռքի գործունեության մասին հրապարակումները ադրբեջանական մամուլում պարբերական բնույթ են կրում:

2001թ. Բաքվում պետական հովանավորությամբ կազմակերպվեց Համաշխարհային ադրբեջանական առաջին համաժողովը, մեկ տարի անց, 2002թ. հուլիսին, նախագահ Հ.Ալիևի հրամանագրով ստեղծվեց Արտասահմանում բնակվող ադրբեջանցիների հետ աշ-

[1] Реальный Азербайджан, 13. 05. 2005.
[2] Հեղինակի մասնավոր զրույցը ՌԴ Հարավային դաշնային շրջանում նախագահի նախկին ներկայացուցիչ Ե.Խոպյորսկայայի հետ:
[3] Обращение к народам суверенных республик от Центра культуры славян Азербайджана, Панорама Азербайджана, 6-12. 12. 1991.

խատանքի պետական կոմիտեն (ԱԲԱԱՊԿ), որի ղեկավար նշանակվեց Ուկրաինայում Ադրբեջանի նախկին դեսպան Նազիմ Իբրահիմովը[1]։

ԱԲԱԱՊԿ հիմնական առաքելությունը արտասահմանյան երկրներում բնակվող ադրբեջանցիների համախմբումն է, աջակցությունը ադրբեջանական կազմակերպություններին, ինչպես նաև ադրբեջանական ինքնության և մշակույթի պահպանումը։ Առաջնային է համարվում նաև հայկական լոբբիին հակազդելու խնդիրը[2]։ Կոմիտեն ունի 40 աշխատակից, մի քանի բաժանմունք՝ եվրոպական, ԱՊՀ, Մերձավոր Արևելքի երկրների սեկտորներ և այլն։

Այս կառույցը լայն աշխատանք է ծավալում նաև Թուրքիայում ադրբեջանական էթնիկ կազմակերպությունների ստեղծման և համակարգման ուղղությամբ։ Ադրբեջանական կառույցների ստեղծման քայլեր են իրականացվում նաև այնպիսի երկրներում, ինչպիսիք են Հնդկաստանը, Պակիստանը, Աֆղանստանը և այլն։

Այս առումով կարևոր է նշել, որ Ադրբեջանի Միլլի Մեջլիսի ընդունած «Ազգային անվտանգության մասին» օրենքով ազգային շահերի ապահովման հիմնական երեք ուղղություններից է համարվում ադրբեջանական սփյուռքի հետ աշխատանքների իրականացումն ու կապերի հաստատումը և, դրանով իսկ, դրա վերածումը պետական քաղաքականության ռազմավարական ուղղության[3]։ Հատուկ ուշադրություն է դարձվում նաև ադրբեջանական մամուլի էջերում սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների հետ հարցազրույցների զետեղմանը[4]։

Ադրբեջանական սփյուռքի ստեղծման ուղղությամբ գործադրված ջանքերը մեծ մասամբ համակարգվում և ուղղորդվում են ԱԲԱԱՊԿ միջոցով։ Երկրի ղեկավարների, մասնավորապես՝ Հեյդար Ալիևի արտասահմանյան այցերի ու շրջագայությունների ընթացքում սկսեց կիրառվել նաև կոնկրետ երկրներում տեղի ադրբեջանական համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպումը։ Վերջիններս հիմնականում իրանական Ադրբեջանից Եվրոպա և ԱՄՆ գաղթած անձինք են։

Փոքրաթիվ այդ համայնքները թեև որևէ էական ազդեցիկ ուժ չեն ներկայացնում ո՛չ ԱՄՆ-ում և ո՛չ եվրոպական երկրներում, այդուհանդերձ, նախնական այդ կառույցներում արդեն որոշակիացված են նրանց գործառույթները, որոնցում առաջնային տեղ են հատկացված ադրբեջանամետ քարոզչության իրականացմանը և հայկական լոբբիստական գործունեության դեմ ուղղված քայլերի ձեռնարկմանը։ Որպես կանոն, ադրբեջանական սփյուռքի կազմավորման գործընթացին մեծ աջակցություն են ցուցաբերում թուրքական, եվրոպական մի շարք երկրներում արդեն ձևավորված և ազդեցիկ դիրքեր ունեցող սփյուռքի կազմակերպությունները։ Ակնառու է նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի, ինչպես նաև Ղարաբաղյան հարցում հայկական կողմի տեսակետների դեմ թուրքական և ադրբեջանական կազմակերպությունների գործողությունների համատեղման իրողությունը։

[1] Эхо, 01. 05. 2005.
[2] Նույն տեղում.
[3] Зеркало, 11. 09. 2004.
[4] Տես Мамедов Р., Азербайджанская диаспора и национальная пресса, Баку, Гартал, 2004 (азерб.).

Ադրբեջանական սփյուռքի կառույցները, ինչպես նաև դրանց անվանումները հայկական կազմակերպությունների պատճենումներ են հանդիսանում: Պատահական չէ Հ.Ալիևի արտահայտությունն այն մասին, թե սփյուռքի կառույցներ ստեղծելու ուղղությամբ անհրաժեշտ է ընդօրինակել նաև հայկական կառույցների փորձը[1]:

Ներկայումս կարելի է խոսել մի քանի խոշոր այդպիսի կառույցների քիչ թե շատ կայացման մասին: Առաջինը Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրեսն է, որը ներկայացված է Ռուսաստանի Դաշնության 67 սուբյեկտներում գործող շուրջ 70 տեղական կազմակերպություններով: Այն գործարար և խորհրդատվական կապեր է հաստատել ՌԴ այլ էթնիկ համայնքների՝ վրացիների, հրեաների, թաթարների և ղազախների համանման կառույցների հետ[2]: ՌԴ-ում այս կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններից մեկը Ղարաբաղյան հարցում ադրբեջանամետ քարոզչության իրականացումն է. հատուկ ուշադրություն է դարձվում ռազմահայրենասիրական բնույթի հրապարակումներին կազմակերպության օրգան «Ադրբեջանական կոնգրես» թերթում[3]:

Մյուս ազդեցիկ ադրբեջանական կազմակերպությունը, որը տարաձայնություններ ունի Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրեսի հետ, Ռուսաստանի ադրբեջանցիների ազգամշակութային դաշնային ինքնավարությունն է (նախագահ՝ Սոյուն Սադիկով[4]), որը հրատարակում է համանուն «ԱԶԵՌՌՈՍ» պարբերականը: 2004թ. այս կառույցի նախաձեռնությամբ Մոսկվայում կազմակերպվել են կլոր սեղաններ «Ռուսաստանի դերակատարությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում» և «Ղարաբաղ. փակուղուց դեպի առաջադիմություն» թեմաներով[5]: Այս կազմակերպությունը հիմնել է «Ղարաբաղ» հիմնադրամը, որը կոչված է «միջազգային հանրությանը հասցնել Ղարաբաղի մասին ճշմարտությունը, կապ հաստատել միջազգային իրավապաշտպան, խաղաղապահ և բարեգործական կազմակերպությունների հետ, ինչպես նաև հայրենասիրական զգացումներ արթնացնել ադրբեջանցիների մեջ՝ բռնազավթված ադրբեջանական տարածքների ազատագրման նպատակով»[6]:

Իր դեմ իրականացված մահափորձից անմիջապես հետո Ս.Սադիկովը հայտարարեց, թե իր մահափորձը «պատվիրել են մարդիկ, ում ձեռնտու չէ հզոր ադրբեջանական սփյուռքի ստեղծումը»[7]:

Անդրադառնալով իր ղեկավարած կազմակերպության առաջիկա ծրագրերին՝ Սադիկովը թվարկել է դրանցից մի քանիսը, որոնք բացահայտ հակահայկական քարոզչական բո-

[1] В. Дятлов, Выходцы из Закавказья в современной российской провинции: проблема диаспорализации, миграции на Кавказе, Ереван, 2003, Кавказский институт СМИ, с. 51.
[2] Мы используем любую возможность для донесения до россиян правды о сути карабахского конфликта, Эхо, 05. 03. 2005.
[3] Նույն տեղում.
[4] 2005թ. մարտի 18-ին Ս.Սադիկովի դեմ մահափորձ իրականացվեց: Կազմակերպության հայտարարության մեջ անուղղակիորեն ակնարկվում էր հայկական հետքի մասին՝ ելնելով Սադիկովի՝ Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ իրականացրած քարոզչական գործունեությունից: Տե՛ս Совершено покушение на главу азербайджанской диаспоры, Зеркало, 19. 03. 2005.
[5] Страны СНГ должны поставить ультиматум Армении, Зеркало, 24. 06. 2004.
[6] Նույն տեղում.
[7] Зеркало, 26. 03.2005.

վանդակություն ունեին. «Ղարաբաղ» հիմնադրամի ներկայացուցչության բացում Բաքվում, ադրբեջանցիների «ցեղասպանության» տարելիցի նշում Մոսկվայում, մայիսին նշել Ղարաբաղի՝ Ռուսաստանի կազմում ընդգրկվելու 200-ամյակը՝ դրանով իսկ, կազմակերպության առաջնորդի խոսքերով՝ «կրկին ապացուցելով, որ Ղարաբաղը զուտ ադրբեջանական հող է, որը հայերով է բնակեցվել Ռուսաստանին միանալուց հետո»[1]:

Երկրորդ խոշոր կազմակերպությունը Համաշխարհային ադրբեջանական կոնգրեսն (ՀԱԿ) է, որը ստեղծվել է 1997թ.: Կազմակերպության նախագահն է Ջավադ Դերախտին: Ներկայումս գործում են նույնանուն երկու կազմակերպություններ, որոնցից յուրաքանչյուրը փորձում է ինքնուրույն գործունեություն ծավալել: Պատճառը կազմակերպության անդամ իրանական ադրբեջանցիների և նախկին խորհրդային ադրբեջանցիների միջև ծագած տարաձայնություններն են:

2005թ. մայիսի վերջերին Ստոկհոլմում կայացավ ՀԱԿ 8-րդ համաժողովը: Ելույթ ունենալով համաժողովի մասնակիցների առջև՝ կազմակերպության ղեկավար մարմնի անդամ Ռահիմ Շահբազին ՀԱԿ գործունեության հիմնական նպատակների շարքում առանձնացրեց տարբեր երկրներում «Ադրբեջանի տարածքների 20%-ի բռնազավթման և հարկադիր տարաբնակների ու փախստականների թշվառ վիճակի մասին տեղեկացնելու» անհրաժեշտությունը[2]: Կոնգրեսի աշխատանքների ընթացքում ցուցադրվել է նաև տեսանյութ՝ նվիրված Խոջալուի դեպքերին: Նախագահ Իլհամ Ալիևի՝ համաժողովի մասնակիցներին ուղղված պաշտոնական ուղերձում, մասնավորապես, նշվում էր. «Արտասահմանում բնակվող ադրբեջանցիները մշտապես զբաղվում են այնպիսի գործունեությամբ, որը հանգեցնում է դրական արդյունքների Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի և հայկական ագրեսիայի հետ կապված պետական շահերի ապահովման հարցերում»[3]:

Մյուս կազմակերպությունը Եվրոպայի ադրբեջանցիների կոնգրեսն է (ԵԱԿ), որը միավորում է շուրջ 50 կազմակերպություններ: Ադրբեջանական կոնգրես անունով կազմակերպություններ են գրանցված Բելառուսում, Ուկրաինայում, Ուզբեկստանում և այլուր: Այս կազմակերպության ջանքերով տեղերում ստեղծվում են Ադրբեջանի բարեկամների խմբեր, մասնավորապես՝ «Խոջալուի ցեղասպանության» հարցը բարձրացնելու նպատակով[4]: Հատկանշական է, որ այս կազմակերպության կենտրոնատեղին Բեռլինն է, քանի որ Եվրոպայում ամենաազդեցիկ թուրքական համայնքը գործում է հենց Գերմանիայում: Ավելորդ չէ նշել նաև այն հանգամանքը, որ ԵԱԿ նախագահ, ազգությամբ ադրբեջանցի Բահադին Գայան շուրջ 57 հազ. մարդ միավորող գերմանա-թուրքական գործարարների խմբի ղեկավարն է: Այսպիսով, ԵԱԿ գործունեության ոլորտ թուրքերի ներգրավումը երաշխավորված է[5]:

[1] Зеркало, 26. 03.2005.
[2] В Стокгольме начался съезд Конгресса Азербайджанцев мира, 21.05.2005, http://www.day.az/print/news/society/25361.html
[3] Նույն տեղում:
[4] Օրինակ, այդպիսի աշխատանքներ տարվում են Ավստրիայում, ԱՄՆ-ում և Շվեյցարիայում, ուր ստեղծվել է նման խումբ Խոջալուի հարցի կապակցությամբ: Տես Asif Abdullayev, Qarabağ və Azərbaycan Diasporu, Karabağ: dün, bügün, yarın, Baku, 2003, s. 18-21.
[5] Эхо, 01. 05. 2005.

Հոլանդիայում գործում է «Ծիածան» հումանիտար օգնության հիմնադրամ *(Regenboog)* ադրբեջանական կազմակերպությունը, որի համանախագահներն են ամուսիններ Ֆաթիմա և Բահրի Յըլդրըմները: Կազմակերպությունը Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ տեսանյութեր է տրամադրում հոլանդական հեռուստաալիքներին[1]:

Եվրոպայում գործող ադրբեջանական կառույցներից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Հոլանդիայում գործող և իր շարքերում տարբեր ադրբեջանական կուսակցությունների, մասնավորապես՝ «Մուսավաթի», «Վահդատի», Ադրբեջանի Դեմոկրատական կուսակցության և այլն, անդամներ ներառող «Ադրբեջանի քաղաքական վտարանդիների եվրոպական միություն» (ԱՔՎԵՄ) կազմակերպությունը: Վերջինս հանդես է գալիս նաև պետականամետ դիրքերից՝ կազմակերպելով հակահայկական ուղղվածության հանրահավաքներ և բողոքի ցույցեր, ընդդիմանալով անջատողական տրամադրություններ ունեցող կազմակերպությունների գործունեությանն արտասահմանում: Այսպես, ԱՔՎԵՄ-ը խիստ հակազդեցություն ցուցաբերեց 2005թ. ապրիլին, Հոլանդիայում, Ալիաքրամ Գումբատովի գլխավորությամբ ստեղծված Թալիշների ազգային շարժում (ԹԱՇ) կազմակերպությանը[2]:

Հայկական դեսպանատների առջև ցույցերի, նստացույցերի նախաձեռնումը սովորաբար տեղի է ունենում փետրվարի վերջերին և կոորդինացվում է Բաքվից: Նախաձեռնողներից մեկը Ղարաբաղի ազատագրության կոմիտեն է[3]: Նրա գործունեությունը հովանավորվում է նաև ԱԲԱԱՊԿ-ի կողմից, ինչի վկայությունն են, օրինակ, Խոջալուի դեպքերի կապակցությամբ Բրյուսելում կազմակերպված միջոցառումները[4]:

Ադրբեջանական կազմակերպություններն ակտիվ գործունեություն են ծավալել Բելգիայում՝ վայելելով թուրքական սփյուռքի կազմակերպությունների աջակցությունը: Ադրբեջանցիները տեղի թուրքերի հետ համատեղ բողոքի ցույցեր են կազմակերպում հայկական դեսպանատան առջև՝ միաժամանակ ծավալելով լայն քարոզչական աշխատանք[5]:

ԱԲԱԱՊԿ անմիջական մասնակցությամբ բողոքի ցույցեր են կազմակերպվում հայկական համաժողովների ժամանակ: Այս պարագայում էլ ադրբեջանական և թուրքական կողմերը հանդես են գալիս համատեղ: Օրինակ՝ Բրյուսելում, Եվրոպական խորհրդարանի շենքում, Համաշխարհային հայկական կոնգրեսի աշխատանքների ընթացքում նման ակցիա կազմակերպվեց Եվրոպայի ադրբեջանցիների կենտրոն և Բելգիայի թուրքական պլատֆորմ կազմակերպությունների կողմից, որոնց իրենց մասնակցությունն ունեցան նաև հարակից երկրների՝ Ֆրանսիայի, Գերմանիայի և Հոլանդիայի ադրբեջանցիները[6]:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին ընդդիմանալու ադրբեջանա-թուրքական քայլերն իրականացվում են քիչ թե շատ համակարգված ձևով: Հատկանշական է, որ արտասահմանում գործող ադրբեջանական և թուրքական կազմակերպու-

[1] Зеркало, 03. 09. 2003.
[2] http://www.day.az/news/politics/24076.html
[3] Նույն տեղում, Азербайджанцы всего мира проведут акцию, посвященную ходжалинской трагедии, Зеркало, 21. 02. 2004.
[4] Зеркало, 03. 09. 2003.
[5] Murat Daoudov, Turkstaligen: een grote familie, http://ymyt.com/nl/2/29_1.shtml
[6] Зеркало, 13. 10. 2004.

թյունները համատեղ միջոցառումներ են իրականացնում հենց Թուրքիայում: Այստեղ են ճշգրտվում հետագա անելիքները: Վերջին անգամ նմանատիպ համատեղ համաժողով անցկացվեց 2003թ. հունիսին, թուրքական Չեշմե քաղաքում: Ադրբեջանական կողմն առաջարկել է Թուրքիայում անցկացնել տնտեսական համաժողով համաշխարհային սփյուռքի կազմակերպությունների մասնակցությամբ՝ աշխարհում ադրբեջանական լոբբիի դերի ուժգնացման նպատակով[1]:

ԱԲԱԱՊԿ նախաձեռնությամբ թուրքական Իսքենդերլի քաղաքում հիմնվեց Ադրբեջանական մշակութային կենտրոնների միության դաշնություն, որտեղ ընդգրկվելու են Թուրքիայի տարածքում գործող ադրբեջանական կազմակերպությունները[2]:

Առանձին տեղ ունի նաև ԱՊՀ երկրների ադրբեջանական կազմակերպությունների միությունը, որի նախագահն է ՌԴ արդարադատության գեներալ Իլգար Գասիմովը, որը նաև «Հանուն Ադրբեջանի» շարժման համախմբող խորհրդի նախագահն է: Ղարաբաղյան հարցում հայկական կողմին հակադրվելու համատեքստում նա կարևորում է «տեղեկատվական դաշտը հայերից խլելու անհրաժեշտությունը[3]: Ի.Գասիմովի անմիջական նախաձեռնությամբ աշխատանք է տարվում Հյուսիսային Կովկասի կազակական և հայկական կազմակերպությունների ու բնակչության միջև լարվածություն ստեղծելու ուղղությամբ:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ադրբեջանամետ քարոզչության կենտրոններից է Ամերիկայի ադրբեջանական ընկերակցությունը (նախագահ՝ Տոմրիս Ազերի, Նյու Ջերսի), որը ստեղծվել է դեռևս 1950-ական թթ.: 2002թ. մայիսին այս կնոջ ջանքերով մի քանի տասնյակ ադրբեջանցիների և թուրքերի մասնակցությամբ ՄԱԿ շենքի մոտ տեղի ունեցավ բողոքի հանրահավաք, որի մասնակիցներին կոչ էր արվում «կիրառել ՄԱԿ բանաձևերը»[4]: Ներկայումս ջանքեր են գործադրվում ԱՄՆ Կոնգրեսում ադրբեջանական լոբբիստական կառույցների ստեղծման ուղղությամբ: 2004թ. օգոստոսի վերջին Բաքու ժամանեց կոնգրեսական պատվիրակությունը՝ հանրապետական Կուրտ Վեկդոնիի գլխավորությամբ: Այդ աշխատանքներին ակտիվորեն ներգրավված է հիշյալ կոնգրեսականի ԱՊՀ հարցերով հատուկ խորհրդական Ադիլ Բաղիրովը[5]: Վերջինս ԱՄՆ մեկնած առաջին ադրբեջանցի ուսանողներից է, որը վիրտուալ միջավայրում Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ էլեկտրոնային ռեսուրսների կուտակման և տեղադրման առաջին փորձերն է կատարել:

Մասնավորապես, նա աշխատել է առաջին ադրբեջանական էլեկտրոնային տեղեկատվության տարածման համակարգի՝ *Newslist*-ի պատրաստման, ինչպես նաև առաջին ադրբեջանական Ինտերնետ ֆորումի ստեղծման ուղղությամբ[6]: Առաջին ինտերնետային էջը հիմնականում նվիրված էր Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ադրբեջանական տեսա-

[1] Зеркало, 05. 06. 2003.
[2] Эхо, 22. 05. 2005.
[3] Зеркало, 13. 02. 2004.
[4] Տոմրիս Ազերին, իր խոսքերով, Ադրբեջանի առաջին հանրապետության ազգային անվտանգության նախարար Նակի Քեյկուրունի թոռնուհին է: Տե u Fariz Ismailzade, Armenian's lessons come in handy for Azeris in building their Diaspora, CaucasUS Context, 2003, no. 1, p. 43.
[5] Эхо, 26. 09. 2005.
[6] Fariz Ismailzade. Armenian's lessons come in handy for Azeris in building their Diaspora, CaucasUS Context, 2003, p. 44.

կետի մատուցմանը և բովանդակային առումով բավական հարուստ էր: Առաջին քայլերն են կատարվում նաև ԱՄՆ նամակ-դիմումներ հասցեագրելու, ինչպես նաև Խոջալուի թեմայով ինտերնետային կայքի տեղադրման ուղղությամբ:

Խանան Նասիբլիի նախաձեռնությամբ Բոստոնում ստեղծվեց Ադրբեջանցի ուսանողների միջազգային կազմակերպությունը: 1994թ. գործում է նաև «ԱՄՆ-Ադրբեջան» ոչ կառավարական կազմակերպությունը: Ադրբեջանական աղբյուրների տվյալներով՝ էթնիկ ադրբեջանցիների թիվը ԱՄՆ-ում հասնում է մոտ 400.000 մարդու, որոնց ճնշող մեծամասնությունն, իհարկե, իրանական ծագում ունի[1]:

Որոշակի քարոզչական նախաձեռնություններ է հանդես բերում նաև Եվրախորհրդարան-Ադրբեջան բարեկամության խումբը, որի նպատակներից է Եվրոպայում հայկական լոբբիին հակակշիռ դառնալը[2]:

Չնայած ԱԲԱԱՊԿ և ադրբեջանական սփյուռքի մի շարք կազմակերպությունների միջև առկա հակասություններին, այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ շոշափելի արդյունքներ արդեն իսկ գրանցվել են ադրբեջանական սփյուռքի կառույցների ստեղծման, դրանց աշխատանքների համակարգման և հակահայկական քարոզչության իրականացման ոլորտում:

Արտասահմանում լրացուցիչ քարոզչական գործառնություն են իրականացնում նաև այստեղ ուսանած ադրբեջանցի ուսանողները, ովքեր ազդեցիկ պաշտոններ են զբաղեցնում համապատասխան երկրներում: Նրանց միջև կապերի հաստատման և համատեղ գործունեության հիմքը հակահայկական քարոզչական գործունեությունն է: Այդպիսիների թվում են Ֆարիզ Իսմայիլզադեն, Ադիլ Բաղիրովը, (ԱՄՆ) Վուգար Սեիդովը (ԿԵՀ, Բուդապեշտ), և ուրիշներ[3]:

Այլ երկրներում ընկերակցությունների, դեսպանատների ջանքերով ադրբեջանական մշակույթի, խոհանոցի տարածման հետևողական աշխատանք է տարվում. դրանք ևս վերածվում են հավելյալ քարոզչամիջոցների: Այս համատեքստում կարևոր նշանակություն է տրվում տարբեր երկրներում ադրբեջանական մշակույթի օրերի անցկացմանը: Մինչև Հայոց ցեղասպանության 90-ամյակի միջոցառումների անցկացումը, մարտի 31-ին՝ «Ադրբեջանցիների ցեղասպանության» նախօրյակին, Բելգիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հոլանդիայի և այլ եվրոպական երկրների ադրբեջանական սփյուռքի ներկայացուցիչները ստորագրահավաք կազմակերպեցին: Առանձնապես կարևորվում է Բելգիան, որի մայրաքաղաքում են գտնվում եվրոպական կազմակերպությունների գրասենյակները: Կարևորվում է նաև թուրքական սփյուռքի հետ կապերի հաստատումը[4]:

ԱԲԱԱՊԿ գործունեությունն ապագայում ուղղված է լինելու համաշխարհային ադրբեջանական սփյուռքի կառույցի ստեղծմանը, որտեղ կմիավորվեն բոլոր ադրբեջանական կազմակերպությունները[5]:

[1] Նույն տեղում.
[2] «Группа дружбы» Европарламент-Азербайджан, Эта структура может стать противовесом армянскому лобби в Европе, Эхо, 22. 09. 2004.
[3] Ադրբեջանական սփյուռքի երիտասարդ առաջնորդների հետ հարցազրույցները տե՛ս www.azerifuture.org
[4] «В Европе уже меняется представление об азербайджанцах»,- наш соотечественник из Бельгии, председатель диаспорской организации Булент Гюрджам, Эхо, 26. 03. 2005.
[5] Эхо, 05.07.2005.

***

Ադրբեջանական պետական քարոզչությունը վայելում է Թուրքիայի, Պակիստանի և մի շարք այլ երկրների աջակցությունը: Դրանց թվում Թուրքիան, կարելի է ասել, առաջին տեղում է: Մինչև ադրբեջանական սփյուռքի կառույցների ստեղծումը, 1990-ականների սկզբներին, Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ակտիվ գործունեություն էին ծավալել թուրքական սփյուռքի, հատկապես Գերմանիայի թուրքական համայնքի կառույցները:

Ադրբեջանամետ դիրքորոշման ապահովման նպատակով Անկարան հատկապես կարևորում է իր նախաձեռնությամբ 1992թ. գումարված թյուրքական գագաթաժողովները, որոնց շրջանակներում Ադրբեջանը և Թուրքիան փորձեր կատարեցին կենտրոնաասիական թյուրքալեզու հանրապետություններին ներգրավել հակահայկական ճակատ: Սակայն այդ փորձերը լուրջ հաջողություններ չունեցան: 1992թ. Կենտրոնական Ասիայի պետությունների ղեկավարները չենթարկվեցին Հայաստանն «ագրեսոր պետություն» որակելուն ուղղված թուրք-ադրբեջանական ճնշումներին՝ չհամաձայնելով նաև Հայաստանի դեմ պատժամիջոցներ կիրառելու նրանց հորդորների հետ[1]:

Բաքուն Անկարայի հետ համատեղ հետևողական աշխատանք է տանում նաև մահմեդական երկրներում հակահայկական տրամադրություններ տարածելու և հակահայ դիրքորոշում ապահովելու ուղղությամբ՝ հիմնականում շեշտը դնելով մահմեդական համերաշխության վրա: Ադրբեջանական կողմը հանդես է գալիս Իսլամական կոնֆերանս միջազգային կազմակերպության (ԻԿԿ) համաժողովներում և վայելում է Թուրքիայի ու Պակիստանի աջակցությունը: Այս կազմակերպության անդամ պետությունների ընդունած բանաձևերում Հայաստանը ներկայացվում է որպես «ագրեսոր», որը պետք է հեռանա «ադրբեջանական տարածքներից»: Ակնհայտ է, որ ԻԿԿ-ն բացահայտորեն երկակի չափանիշներ է կիրառում Ղարաբաղյան հարցում: Ճանաչելով պաղեստինցիների ազգային ինքնորոշման իրավունքը՝ այն բացառում է նույն իրավունքից օգտվելու քրիստոնյա հայերի հնարավորությունը: Թուրքիայի և Պակիստանի ադրբեջանամետ քարոզչությունը նկատելի է նաև մեկ այլ միջազգային կառույցի՝ Տնտեսական համագործակցության կազմակերպության շրջանակներում, որին անդամակցում են Թուրքիան, Իրանը, Պակիստանը, կենտրոնաասիական մի շարք այլ երկրներ:

Արցախյան հիմնահարցի շուրջ արդյունավետ քարոզչություն իրականացնելու, ինչպես նաև թրքախոս երկրներում ու համայնքներում միասնական կարծիք ձևավորելու նպատակով թուրքական կողմը լայնորեն կիրառում է նաև արբանյակային հեռուստատեսության և «Միջազգային նորությունների թյուրքական գործակալությունների միության» հնարավորությունները[2]:

Ինչպես նշեցինք, բացի Թուրքիայից, ադրբեջանամետ դիրքորոշում ունի նաև Պակիստանը: Բաքուն հետևողական աշխատանք է տանում նոր դաշնակիցներ գտնելու ուղղությամբ: Ադրբեջանում Իրաքի նոր կառավարությունը ներկայացնող դեսպան Էրշադ Օմար Իսմայիլը հայտարարել է. «Կառավարությունը փոխվեց, սակայն մեր քաղաքականությունը չի փոխվել: Իրաքը իսլամական պետություն է և Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում շարունակելու է սատարել Բաքվի քայլերը»:

[1] Տե՛ս Հայկ Դեմոյան, Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը, Երևան, 2002:
[2] Фреди Де Пау, Политика Турции на Кавказе, в кн. Спорные границы на Кавказе, М., Весь мир, 1996, с. 203.

4. Հայկական կողմի քարոզչական աշխատանքի թերություններն ու բացթողումները և դրա իրականացման ելակետերը

Գերագույն արվեստ է առանց ճակատամարտի հակառակորդին հաղթելը։
Սուն Ցզի

Չի կարելի ցանկանալ սեփական պետության պարտությունը՝ միաժամանակ մյուս բոլոր առումներով մնալով դրա օրինավոր քաղաքացին։
Պ. Լայնբարջեր

Մեր քարոզչության ոլորտին անդրադառնալիս որպես պարտադիր փաստարկ հիշատակվում էր տեղեկատվական դաշտում մեր պարտությունների և ադրբեջանական կողմի առավելությունների մասին։ Նույնը գոյություն ունի նաև ադրբեջանական կողմում, որը հանդես է գալիս ամենակարող հայկական լոբբիի առասպելականացման դիրքերից։ Ինչևէ, մեր խնդիրը սուբյեկտիվ կարծիքներին անդրադառնալը չէ, այլ տեղեկատվական դաշտում մեր թույլ տված սխալներն ու բացթողումները վեր հանելը։

Արցախյան պատերազմի տարիներին հայկական կողմի թույլ տված լուրջ սխալներից էր գրաքննության բացակայությունը, որի արդյունքում կարևոր և ռազմական գաղտնիք պարունակող տեղեկությունները պարբերաբար հայտնվում էին տեղական մամուլի էջերում։ Հստակ աշխատանք չիրականացվեց ՀՀ կամ Արցախ ժամանած արտասահմանյան ԶԼՄ ներկայացուցիչների հետ քարոզչական բնույթի աշխատանք տանելու ուղղությամբ։ Գրեթե լիովին բացակայում էր այդ լրագրողներին թարգմանիչներ կցելու պրակտիկան, այնինչ Ադրբեջանում դրան հատուկ ուշադրություն է դարձվում[1]։

Լուրջ բացթողումների շարքում կարելի է մատնանշել նաև պատերազմի ընթացքում հոգեբանական պատերազմ վարելու և պրոֆեսիոնալ քարոզիչների ներգրավմամբ հատուկ խմբի ձևավորման անտեսումը, որը պատերազմական իրավիճակում կկարողանար իրականացնել լուրջ գործառություններ՝ նվազագույնի հասցնելով կորուստները։

Ցանկացած քարոզչական աշխատանք ենթադրում է որոշակի պլանավորում և ժամանակացույցի, մեթոդական աշխատանքի, ուղղությունների ու ինտենսիվության ճշգրտում։ Ցավոք, մեր հակաքարոզչության ոլորտում կարող ենք արձանագրել մի շարք աննրելի բացթողումներ։

Առաջին հերթին, դա վերաբերում է լուրջ և պետականամետ վերլուծական կենտրոնների խիստ սահմանափակ թվին։ Նման կենտրոնները պետք է ստանձնեն արդյունավետ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման բեռը՝ միաժամանակ վայելելով պետական հովանավորություն։ Կարելի է փաստել, որ նման կառույցների ստեղծման գործում մենք բավական ուշացել ենք, այնինչ մեր անմիջական հարևանների՝ Վրաստանի ու Ադրբեջանի պարագայում նման կառույցներն արդեն կայացել են և աչքի են ընկնում իրենց գործունեության ու նպատակների բազմազանությամբ, և որ ամենակարևորն է՝ ձևավորված հեղինակությամբ և ավանդույթներով։ Կարծում ենք՝ անհրաժեշտ է պետական բյուջեից, տարբեր գերատեսչություններից միջոցներ հատկացնել նման կենտրոնների կազմակերպմանը, ինչից մեծապես կշահեր հայրենական գիտությունը, կբարձրանար պետական քարոզչության

[1] Վարդան Դևրիկյան, Չսկսված և չավարտված պատերազմը, Երևան, 2004, էջ 66։

արդյունավետությունը: Խիստ շահեկան կլիներ Սփյուռք-Հայաստան համագործակցության շրջանակներում նախատեսել նման կենտրոնի ստեղծումը սփյուռքահայ և հայաստանաբնակ քաղաքացիների ներգրավմամբ:

Երկրորդ խոշոր բացթողումը հայ օտարալեզու գիտնականների և փորձագետների «համայնքի» բացակայությունն է: Դրա առկայությունն այսօր մեծապես կարևորվում է, քանի որ այդ հեղինակների միջոցով օտարալեզու և, առաջին հերթին, իհարկե, անգլիալեզու հրապարակումների միջոցով հայկական տեսակետները կմատուցվեին օտարալեզու լսարանին: Շատ կարևոր է նաև, որպեսզի Սփյուռքի և Հայաստանի հեղինակների կողմից իրականացվող աշխատանքների նպատակներն ու խնդիրները սինքրոնացվեն:

Մյուս լուրջ բացթողումը հայ հեղինակների և նրանց աշխատանքների հրատարակման համակարգված և հստակ ծրագրված մեխանիզմների ու դրամական հոսքերի բացակայությունն է: Այսօր պատրաստվում են բազմաթիվ գրքեր, հոդվածներ, որոնց մեծ մասը հետաքրքիր և կիրառելի է քարոզչության ու հակաքարոզչության տեսակետներից: Սակայն շատ դեպքերում հեղինակները ստիպված են լինում գիտական աշխատանքը համատեղել հովանավոր փնտրելու հետ՝ անտեղի ժամանակ և ջանքեր վատնելով սեփական աշխատանքները հրատարակելու համար:

Խիստ կարևոր է մեր անմիջական հարևանների պատմության, ազգագրության, լեզվաբանության և մշակույթի հարցերով մասնագետների պատրաստումը համալսարաններում և ինստիտուտներում: Այսօր առանց այն էլ աննրելի է մարդկային ռեսուրսների վատնումը գիտության ասպարեզում:

Առանձնահատուկ նշանակություն ունեն քարոզչական պայքարում նախաձեռնություն հանդես բերելը և նախահարձակ հայտարարությունների ու գործողությունների կիրառումը՝ հակառակորդ կողմին պաշտպանողական տակտիկա պարտադրելու իմաստով: Սա հատկապես կարևոր է պետության առաջին դեմքերի հայտարարությունների պարագայում:

Կարելի է առանձնացնել քարոզչական և հակաքարոզչական պայքարի մի քանի տարատեսակներ, որոնք կարելի է կիրառել ի հակակշիռ ադրբեջանական նախաձեռնությունների: Դրանք են.

- «ջլատող» նորություններ և ձեռնարկներ. օրինակ՝ ղարաբաղյան դրամների, դրոշմանիշերի թողարկումը, դրա լուսաբանումը մամուլում[1]: Որպես կանոն՝ ադրբեջանական կողմը սուր կերպով է արձագանքում նման փաստերին և փորձեր է կատարում ամեն կերպ հակազդել դրանց,
- հակազդեցություն և դժգոհություն առաջացնող միջոցառումների և լուրերի տարածում. օրինակ՝ հնագիտական պեղումների իրականացում և դրանց արդյունքների լուսաբանում, արտասահմանյան զբոսաշրջիկների պատվիրակության ժամանում ԼՂՀ, միջազգային միջոցառումների անցկացում,
- «շեղող» նախաձեռնություններ. օրինակ՝ Նախիջևանի վերաբերյալ ինտենսիվ տեղեկատվության տարածում, Նախիջևանի երկրամասի հայկական պատմամշակութային ժառանգության մասին հրապարակումներ մամուլում, գրահրատարակություն և դրանց սինքրոնացում: Պետք է արձանագրել, որ Նախիջևանում և Ադրբեջանի ամբողջ

[1] «Азермарка» и МИД заявили о своем недовольстве, Эхо, 21. 08. 2004.

տարածքով մեկ հայկական հուշարձանների ոչնչացման փաստերը, այդուհանդերձ, չեն ստանում անհրաժեշտ շեշտադրումներ միջազգային ատյաններում:

- «անհանգստացնող» միջոցառումներ. հիմնականում կարելի է անդրադառնալ Ադրբեջանի տարածքում բնակվող փոքրամասնությունների անցյալին և ներկային: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի Ադրբեջանի տարածքում ապրող փոքրամասնությունների քաղաքական, մշակութային կյանքին անդրադարձող Ինտերնետ կայքերի ստեղծմանը: Այսպես, Սանկտ Պետերբուրգում տպագրվող «Թոլիշ» և Մոսկվայում լույս տեսնող «Թոլիշի սեդո» թերթերն անլեգալ տարածվում են հարավային Ադրբեջանի թալիշաբնակ շրջաններում[1]: Հատկանշական է, որ այս ամենը ադրբեջանական մամուլը գնահատում է, ոչ ավելի, ոչ պակաս, քան «Ադրբեջանի հանդեպ գաղափարական դիվերսիա»,
- լավ կազմակերպված և համալիր ապատեղեկատվության տարածում:

Լուրջ ուշադրություն պետք է դարձնել նաև ներքին քարոզչության հիմնախնդրին և ադրբեջանական կողմի վնասակար, հաճախ հոգեբանական ազդեցության տարրեր պարունակող քարոզչական տեղեկատվությունից հայ բնակչությանը զերծ պահելու ուղղությամբ: Ներքին քարոզչության տեսակետից լուրջ բացթողում է ԼՂՀ տարածքում հայկական հեռուստա- և ռադիոհաղորդումների հեռարձակման սահմանափակությունը: Որպես կանոն՝ այս դեպքում տեղի բնակիչները բավարարվում են ադրբեջանական հեռուստակայանների հաղորդումները դիտելով, ինչը խիստ անընդունելի և վտանգավոր է բնակչության մեջ անցանկալի տրամադրություններ առաջացնելու առումով: Այս հանգամանքն ավելի է կարևորվում հատկապես ադրբեջանական հանրային հեռուստատեսությամբ հայերեն հաղորդումներ թողարկելու նպատակադրության պարագայում[2]:

Առաջարկություններ և դիտողություններ

Ելնելով վերոշարադրյալից՝ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ առաջարկություններն ու դիտողությունները.

- կոնկրետ քայլեր ձեռնարկել հայկական կողմի քարոզչական և հակաքարոզչական կառույցների ստեղծման և դրանց փոխհամագործակցության կազմակերպման ուղղությամբ,
- հիմնադրամների ստեղծում քարոզչական աշխատանքի իրականացման նպատակով՝ գրահրատարակչության, մամուլի, Համացանցի և այլ միջոցներով, պետական, հասարակական կազմակերպություններին և անհատ ձեռներեցներին այդ աշխատանքին ներգրավելու մեխանիզմների մշակում,
- ադրբեջանական ապատեղեկատվության դեմ պայքարի, արտաքին քարոզչության և հակաքարոզչության, ինչպես նաև տեղեկատվական պատերազմների էությունը լուսաբանող թեմաներով սեմինարների կազմակերպում և որակավորման բարձրացման համալիր միջոցառումների անցկացում լրագրողների համար,
- Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ տեսակետների ընդհանուր քաղաքականության մշակում հայկական լրատվամիջոցների կողմից՝ ուղղված արտաքին լսարանին:

[1] 525ci gazet, 17. 05. 2003.
[2] Տե՛ս «Azq», 19.07.2005.

Այս առումով խիստ անհրաժեշտ է մի քանի էլեկտրոնային տեղեկատվական հանգույցների ստեղծումը: Դրանք պետք է ունենան արտասահմանյան թղթակիցներ և օպերատիվ տեղեկատվության կայք: Հնարավոր բոլոր միջոցներով պետք է բացառել հայկական ԶԼՄ վտանգավոր աստիճանի հասած կախվածությունը ադրբեջանական տեղեկատվական աղբյուրներից,

- նվազագույնի հասցնել հայկական լրատվամիջոցների տեղեկություններում ադրբեջանական թերթերին կամ Ինտերնետ կայքերին հղումներ կատարելը, առավել ևս՝ այդ կայքերի կամ թերթերի բաներների մեծադիր ցուցադրումը,
- լուրջ ուշադրություն դարձնել Ինտերնետ ցանցում հայկական տեղեկատվական պորտալների կազմակերպման, թերթերի և հեռուստաընկերությունների արտասահմանյան թղթակիցների առկայության հարցերին: Հենց նրանք են ապահովելու տեղեկատվության հաղորդումը, այսպես կոչված, առաջին ձեռքից՝ բացառելով կախվածությունն օտար, առավել ևս՝ ադրբեջանական կամ թուրքական աղբյուրներից: Ներկայումս Համացանցի www.panarmenian.net, www.cilicia.com կայքերը չեն բավարարում նման առաքելության իրականացման պահանջները, իսկ groong.com կայքը թեև ընդգրկում է հայկական առօրեական թեման Համացանցում, սակայն այդ տեղեկությունները տեղադրվում են մեկ կամ երկու օր ուշացումով,
- քարոզչական և հակաքարոզչական աշխատանքներով մշտապես զբաղվող խմբի կամ կենտրոնի ստեղծում, որն իրականացնելու է արագ արձագանքման խմբի գործառույթներ՝ տեղեկատվության վերլուծության, տվյալների համակարգման և կոնկրետ առաջարկներ ներկայացնելու պարտավորությամբ: Նման խմբում կամ կենտրոնում, մեր կարծիքով, պետք է ներգրավվեն պատմաբաններ, քաղաքագետներ, իրավաբաններ, էթնոհոգեբաններ, ազգագրագետներ և լրագրողներ: Կենտրոնի առաջնային խնդիրները պետք է լինեն ադրբեջանական մամուլի, գրահրատարակչության և հատկապես դպրոցական դասագրքերի բովանդակությունների մշտական մոնիթորինգի անցկացումը, դրանց վերաբերյալ վերլուծական զեկույցների պատրաստումը միջազգային ատյաններին ներկայացնելու նպատակով, ինչպես նաև դրանց դեմ հակաքարոզչություն իրականացնելու համար առաջարկներ ներկայացնելը:

Մեր կարծիքով, խիստ անհրաժեշտ են առանձին դիտորդական առաքելությունները, պաշտոնական, միջազգային կազմակերպությունների պատվիրակությունները, ինչպես նաև արտասահմանյան հեղինակավոր թերթերի լրագրողների հետ հատուկ պատրաստություն անցած և քարոզչական աշխատանքին տիրապետող անձանց, խմբերի, թարգմանիչների և ուղեկցորդների (գիդ) պատրաստումը, որոնց աշխատանքային գործունեությունը լսարանի հետ մեծ նշանակություն կարող է ունենալ նախնական դիրքորոշումների առումով՝ էապես ազդելով արվող եզրակացությունների վրա:

Կարևոր է նաև արագ արձագանքման խմբերի ձևավորումը, որոնք արտասահմանյան մամուլում կամ գրահրատարակչական ոլորտում հանդես կգան հայկական կողմի համար ոչ նպաստավոր հրապարակումներին նամակներով, հոդվածներով կամ գրաքննությամբ պատասխանելով: Որպես կանոն՝ նման հրապարակումները բացահայտում են նաև տվյալ

կողմի հակազդեցության ռեսուրսները, ծավալն ու ինտենսիվությունը:

Համացանցում տեղեկատվական-քարոզչական աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ է մշակել և հետևողականորեն իրագործել ինֆորմացիոն-քարոզչական համալիր ծրագիր: Դատելով Համացանցում հայկական ռեսուրսների դիտարկման արդյունքներից՝ ադրբեջանական կայքերի համեմատ, հայկական կայքերը զիջում են քանակական տեսակետից, և այս առումով կարող ենք փաստել, որ Համացանցի որոնողական հնարավորությունների արդյունքում չեզոք լսարանին առաջին հերթին մատուցվում են ադրբեջանական էլեկտրոնային ռեսուրսները: Արդի շրջանում կիբեռպատերազմները տեղեկատվական պատերազմների բաղկացուցիչ, եթե չասենք՝ կարևորագույն բաղադրիչ են համարվում: Ուստի հույժ կարևոր է անհապաղ և լուրջ մոտեցում ցուցաբերել՝ արդեն իսկ ուշացած միջոցառումների ձեռնարկման ուղղությամբ:

Նախագծի հիմնական նպատակն է փոխկապակցված ինտերնետային կայքերի և էջերի միջոցով գլոբալ Համացանցում հայկական կողմի տեղեկատվական անվտանգության ապահովումը՝ վիրտուալ քարոզչության և օնլայն «պատերազմներ» իրականացնելու ուղղությամբ: Այն բաղկացած է լինելու պայմանականորեն «պաշտպանողական» և «հարձակողական» բովանդակություն ունեցող կայքերից:

Թեմատիկ առումով դրանք բաղկացած են լինելու հետևյալ նյութերից, որոնք անհրաժեշտ է ներկայացնել ռուսերեն և անգլերեն.

ա. Ղարաբաղյան հիմնահարց. նախապատմություն/ժամանակագրություն/ փաստաթղթեր/չեզոք աղբյուրների նյութեր և վկայություններ,

բ. հայերի նկատմամբ ջարդեր և բռնություններ Սումգայիթում (1988թ.), Բաքվում (1990թ.) և ղարաբաղյան պատերազմի ընթացքում (1991-1994թթ.),

գ. Խոջալուի իրադարձությունները (1992թ.), հայկական տեսակետներ արտահայտող նյութերի և փաստերի տեղադրում,

դ. Ադրբեջան և միջազգային ահաբեկչական ցանց. Ադրբեջանը՝ որպես Հարավային Կովկասի անվտանգությանը և կայունությանն սպառնացող վտանգ,

ե. հակահայկական քարոզչություն Ադրբեջանում. ադրբեջանական հրապարակումներում հակահայկականության բացահայտում, աղբյուրների մեջբերում,

զ. Ադրբեջանում մարդու իրավունքների ոտնահարման և բռնությունների մասին արտասահմանյան թերթերի, միջազգային կազմակերպությունների զեկուցումների, ադրբեջանական ընդդիմության և այլ նյութերի հավաքածու,

է. պատմական վարկաբեկիչ նյութերի հավաքածու. ադրբեջանցի թյուրքերի բռնարարքները և բարքերը նկարագրող պատմական փաստաթղթեր ու բնութագրումներ,

ը. առանձին ինտերնետային էջի պատրաստում, որտեղ հատուկ մշակված տեղեկատվական-քարոզչական տեխնոլոգիաների կիրառմամբ դեսիմվոլիզացիայի են ենթարկվում Ադրբեջանի պատմությունը, նշանավոր դեմքերն ու դեպքերը, առկա և ակնկալվող դեպքերն ու իրադարձությունները, որոնք ինչ-որ կերպ կարող են նպաստել ադրբեջանական հասարակության շրջանում ազգային և ազգայնական տրամադրությունների ուժգնացմանը: Այստեղ կզետեղվեն նաև Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունները վարկաբեկող նյութեր՝ ներառելով թե՛ պատմական, թե՛ ժամանակակից փուլերը, Ադրբեջան-Վրաստան հարաբերու-

թյունների վերաբերյալ վարկաբեկիչ նյութեր՝ ներառելով մամուլում երկուստեք հրապարակված հոդվածները, պետական պաշտոնյաների հայտարարությունները, ընթացիկ դեպքերը և այլն,

թ. կարևոր քարոզչական լծակ կարող են հանդիսանալ արտասահմանում գտնվող ադրբեջանցի քաղաքական վտարանդիների մասին նյութերի հրապարակումը կամ նրանց հետ հարցազրույցների անցկացումը։

***

Առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում Ադրբեջանում տեղեկատվական-(բարոյա)հոգեբանական մթնոլորտի (ադրբեջաներեն ռադիոհաղորդումների թողարկումներ և մամուլի հրապարակումներ) անընդմեջ ուսումնասիրությունը։

Ներկայումս Ադրբեջանում տիրող սոցիալական խիստ լարված և պայթունավտանգ իրավիճակն իշխանությունների կողմից ամեն կերպ քողարկվում է։ Ժամանակ առ ժամանակ տեղական մամուլի էջերում հայտնվում են ուղեգրական նոթեր Ադրբեջանի շրջաններում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին։ Տեղեկությունների և ականատեսների վկայությունների համաձայն, Ադրբեջանի մի շարք քաղաքներում և հատկապես գյուղական շրջաններում հաճախակի են հոսանքազրկումները, գազամատակարարման դադարեցումը, խիստ բարձրացել է հանցագործությունների թիվը։ Ստեղծվել է նաև հակասանիտարական վիճակ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով։

Սոցիալական լարվածությունը կարող է հանգեցնել վտանգավոր պոռթկումների՝ լրջորեն սպառնալով Ադրբեջանի ներքաղաքական կայունությանը։ Հայկական կողմի համար չափազանց կարևոր է նման տեղեկությունների բազմացումը հակաքարոզչական նպատակներով և մշակված տեղեկատվական հոսքերի միջոցով դրանց ներկայացումը ադրբեջանական հասարակության լայն խավերին՝ հիմնականում ռադիոհաղորդումների տեսքով, հաշվի առնելով լսարանի սեռատարիքային, ինչպես նաև կրթական մակարդակն ու սոցիալական կազմը։

Քարոզչական և հակաքարոզչական աշխատանքներ իրականացնելու կարևոր դաշտ է նաև ադրբեջանական բանակում առկա իրավիճակի մասին հրապարակումների թողարկումը։ Նման տեղեկատվության արդյունավետ մշակումը և մատուցումը ադրբեջանական հասարակությանն ու միջազգային լսարանին լրացուցիչ կռվան կարող են հանդիսանալ ադրբեջանական ղեկավարության ռազմատենչ հայտարարություններին պատասխանելու և դրանք չեզոքացնելու տեսանկյունից։

Խիստ անհրաժեշտ է միջազգային կազմակերպություններին, միջնորդական առաքելություններին և արտասահմանյան ԶԼՄ ներկայացուցիչներին արագ և համոզիչ կերպով ներկայացնել այն փաստերը, որոնք վերաբերում են Ադրբեջանում հակահայկական տրամադրությունների բորբոքմանը, այն հիմնավորմամբ, որ ներկայիս Ադրբեջանի հասարակությունը, առնվազն մոտակա մի քանի տասնամյակների ընթացքում, պատրաստ չէ բարիդրացիական հարաբերություններ հաստատել միմիայն սոսկ իբրև թշնամի ընկալվող հարևան ազգի հետ։

Հավելված

Հայկական կողմի քարոզչական ելակետերը ԼՂ հիմնահարցում

Հայկական կողմի համար խիստ կարևոր է ուրվագծել իր ելակետերը քարոզչական և տեղեկատվական պատերազմներում, որոնք նվազ խոցելի և հիմնավորված պետք է դարձնեն հիմնախնդիրը միջազգային հանրությանը ներկայացնելու ընթացքում: Այս առումով կարելի է հիշատակել հետևյալ կարևոր քարոզչական ելակետերը.

1. Ադրբեջան պետության և ադրբեջանական ազգի ձևավորման ոչ վաղ անցյալը և պատմական ռեսուրսի սահմանափակվածությունը, Լեռնային Ղարաբաղի նկատմամբ պատմական հավակնությունների անհիմն լինելը, ԽՍՀՄ 1926թ. մարդահամարում «ադրբեջանցի» ազգությանը վերաբերող որևէ հիշատակության բացակայությունը (կովկասյան թյուրքեր անունով հայտնի էթնիկ հանրությունը ադրբեջանցի էթնանվամբ ի հայտ եկավ 1930-ական թթ. սկզբներից միայն: 1918-1920թթ. Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունը թուրքական բանակի կողմից ստեղծված կազմավորում էր, որը չուներ միջազգայնորեն ճանաչված սահմաններ և սկզբնական շրջանում գտնվում էր թուրքական վերահսկողության տակ: Թուրքական գործոնի ազդեցությամբ այն խորհրդայնացվեց 1920թ. ապրիլին):
2. Լեռնային Ղարաբաղում հայկական էթնոսի բնակության մասին չեզոք աղբյուրների վկայությունների ներկայացումը և, որպես հիմնավորող փաստարկ, ադրբեջանական զեղծարարությունները հերքող փաստերի տրամադրումը:
3. Ադրբեջանի ղեկավարության կողմից տասնամյակներ շարունակ էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ տարվող ուծացման քաղաքականությունը, որի արդյունքում կտրուկ կերպով նվազել է այլազգիների տեսակարար կշիռը ադրբեջանական բնակչության կազմում:
4. Նախիջևանի օրինակով Լեռնային Ղարաբաղի հայության էթնիկ զտման ենթարկվելու ճակատագրի կանխատեսումը:
5. Հայկական հուշարձանների միտումնավոր ոչնչացման փաստերի ներկայացումը՝ որպես հայկական ինքնության իսպառ բնաջնջման պաշտոնական փորձ:
6. Ղարաբաղյան հիմնահարցի վերաբացմանն ի պատասխան՝ ադրբեջանական կողմի բռնությունների և ջարդերի քաղաքականության որդեգրումը Սումգայիթում և Բաքվում՝ որպես հայկական պահանջները չեզոքացնելուն ուղղված քայլեր:
7. 1991թ. ադրբեջանա-խորհրդային համատեղ ռազմական գործողությունների իրականացումը Լեռնային Ղարաբաղի հյուսիսային տարածքներից հայ բնակչությանը վտարելու ուղղությամբ («Օղակ» գործողությունը):
8. Միջազգային կառույցների, մասնավորապես՝ Եվրոպական խորհրդարանի և ԱՄՆ Սենատի ընդունած նախնական բանաձևերի (1988-1989թթ.) բովանդակության ներկայացումը, որոնցով խորհրդային ղեկավարությանը կոչ էր արվում հարգել ԼՂ հայ բնակչության ինքնորոշման իրավունքը:
9. Ադրբեջանական կողմից իսլամական վարձկանների, մասնավորապես՝ չեչենների և աֆղաններների ներգրավումը հայկական ուժերի դեմ հարձակողական գործողություններում:
10. Ադրբեջանի տարածքում միջազգային ահաբեկչական ցանցի հանգրվանելու, 1998թ. և 2001թ. Վաշինգտոնում և Նյու Յորքում ԱՄՆ դեսպանատների դեմ իրականացված ահաբեկչական գործողություններում ադրբեջանական հետքի առկայության փաստերի ներկայացումը:

11. Ղարաբաղյան հիմնահարցի հանգուցալուծման վերաբերյալ Ադրբեջանի նախագահների, պաշտոնատար այլ անձանց ու առաջնորդների ագրեսիվ հայտարարությունների ներկայացումը միջազգային ատյաններում՝ որպես ադրբեջանական կողմից հակամարտությունը բռնի միջոցներով լուծելու առաջնային վկայություն:
12. Ադրբեջանում հակահայկական հիստերիայի սանձազերծումը և դրա պետական հովանավորությունը առաջիկայում երկու ժողովուրդների անհամատեղելիության պարզագույն վկայությունն ու ապացույցն են:
13. Ադրբեջանի՝ որպես տոտալիտար պետության (որտեղ իշխում են անձի պաշտամունքը և իշխանության փոխանցման ժառանգական սկզբունքը, և որտեղ անհամատեղելի են պետական համակարգն ու ժողովրդավարությունը), կազմում ԼՂՀ ենթակայությունն անհնար է:

Գրականություն

1. Դեմոյան Հայկ, Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը, Երևան, 2002:
2. Դևրիկյան Վարդան, Չսկսված և չավարտված պատերազմը, Երևան, 2004:
3. Հարությունյան Գ., ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2003:
4. Айдамиров Т., Гасымов Х., Большие амбиции малого этноса. Нурлан, Баку, 2003.
5. Арас Джангир, Кто есть кто в четвертой мировой войне, Баку, 2005.
6. «Армянский геноцид»: миф и реальность, Баку, 1992.
7. Асадов Сабир, Терроризм. Причина и следствие, Баку, 2001, Сабир Асадов, Миф о «Великой» Армении, Баку, 1999.
8. Бадалов Рахман, Смена идеологических ориентиров и карабахский конфликт, Karabağ: dün, bügün, yarın, Baku, 2003.
9. Вердиева Х.Ю., Переселенческая политика Российской империи в Северном Азербайджане, Баку, 1999.
10. Дашдамиров А., Идеологические проблемы межкавказских отношений, Баку, 2001.
11. Де Пау Фреди, Политика Турции на Кавказе, в кн. Спорные границы на Кавказе, М., Весь мир, 1996.
12. Демоян Г., Этническая принадлежность в политическом и общественном дискурсе современного Азербайджана, Баку, 2004.
13. Демоян Г., Мелик-Шахназарян Л., Ходжалинское дело: особая папка, Ереван, 2003.
14. Дятлов В., Выходцы из Закавказья в современной российской провинции: проблема диаспорализации, в кн. Миграции на Кавказе, Ереван, Кавказский институт СМИ, 2003.
15. Информационная война в Чечне. Факты. Документы. Свидетельства, ноябрь 1994-сентябрь 1996, Права человека, М., 1997.
16. Информационные войны, Ереван, 2002.
17. Историческая география Западного Азербайджана, сост. Сабир Асадов, Изд-во, «Азербайджан», Баку, 1998.
18. История Азербайджана, учебник истории для 11-го класса, под редакцией проф. С. Гандилова и проф. И. Мамедова, Баку, 2002.
19. Панарин И., Панарина Л., Информационная война и мир, Олма-Пресс, М., 2003.
20. Историческая география Западного Азербайджана, сост. Сабир Асадов, Баку, 1998.
21. Карабах. Очерки истории и культуры, Институт археологии и этнографии НАНА, Чашиоглу, Баку, 2004.
22. Лайнбарджер П., Психологическая война, М., 1962.
23. Преступление армянских террористических и бандитских формирований против человечества (19-20вв), Баку, 2004.

24. Столяров К., Распад: От Нагорного Карабаха до Беловежской пущи, Олма-Пресс, М., 2001.
25. Хильсман Р., Стратегическая разведка и политические решения, М., 1957.
26. Abdullayev Asif, Qarabağ və Azərbaycan Diasporu, Karabağ: dün, bügün, yarın, Baku, 2003.
27. Akçam Taner. Dialogue Across an International Divide: Essays Towards a Turkish-Armenian Dialogue, The Zoryan Institute, 2001.
28. Axundov Etibar. Informasiya müharibəsi haqqında mülahizələr, Karabağ: dün, bügün, yarın, Baku, 2003.
29. The Aggression of the Republic of Armenia Against the Azerbaijani Republic, Baku, 1994.
30. Asadov Sabir, Mammedov Israfil, Tragical Fate of Azerbaijanis in Armenia, Azerbaijan Publishing House, Baku 2001.
31. Congressional Record. Proceeding and Debates of the 100th Congress Second Session, Volume 134 – Part 13, July 13, 1988 to July 27, 1988, Washington, 1988.
32. Demoyan Hayk, Levon Melik-Shahnazaryan, Khodjalu Case: A Special Dossier, Yerevan, 2004.
33. Demoyan Hayk, The Western Media Coverage of Nagorno-Karabakh Conflict in 1988-1990, Yerevan 2005.
34. Grigorian Mark, Sparks are flying in cyberspace as the Nagorno-Karabakh conflict takes on a new and unexpected dimension.Institute for War & Peace Reporting Caucasus Reporting Service, Issue 17, February 4, 2000.
35. Ismailzade Fariz, Armenian's lessons come in handy for Azeris in building their Diaspora, CaucasUS Context, 2003.
36. Official journal of the European Communities, No. C 94/117, July, 1988.
37. Political Warfare and Psychological Operations. Rethinking the US Approach, Edited by Frank R. Barnett, Carnes Lord, National Defense University Press, 1989.
38. Propaganda and mass persuasion: a historical encyclopedia, 1500 to the present / Nicholas J. Cull, David Culbert, David Welch, Santa Barbara, 2003.
39. Simpson Christopher, Science of Coercion. Communication Research and Psychological Warfare, 1945-1960, Oxford University Press, 1996.
40. Taylor Philip. Third Wave Info-Propaganda: Psychological Operations in the Post-Cold War Era, in Propaganda. Political Rethoric and Identity 1300-2000, edited by Bertrand Taithe and Tim Thornton, Sutton Publishing, 2000.
41. Turk Duniyasi, Baku, 2004.

Թերթեր և ամսագրեր

1. Uqq, 1992-2005:
2. Azadliq, 1998.
3. Акция, еженедельная газета, 1999.
4. Ени Мусават, 2003.
5. 525ci gazet, 17. 05. 2003.
6. Реальный Азербайджан, 13. 05.2005.
7. Ноян Тапан, 14. 02. 2000
8. Панорама Азербайджана, 6-12. 12. 1991.
9. Эхо, 2004-2005.
10. Зеркало, 2004-2005.
11. Baku Today, 2005.

Նյութեր Ինտերնետ ցանցից

1. Азербайджан создает орган координации Интернета. URL: http://www.day.az/news/hitech/21171.html
2. В Стокгольме начался съезд Конгресса Азербайджанцев мира, 21. 05. 2005, http://www.day.az/print/news/society/25361.html
3. www.day.az/news/armenia/20792. html
4. www.day.az/news/armenia/20990. html
5. www.day.az/news/society/11406.html
6. Azerbaijan to Secure Internet Sites from Armenian hackers, http://www.eurasianet.org/resource/armenia/hypermail/200002/0021.html,
7. Daoudov Murat, Turkstaligen: een grote familie, http://ymyt.com/nl/2/29_1.shtml

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչական գրականության ընտրանի

1. Айбнер Дж., Кокс К., Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, 1998.
2. Мурадян П., История-память поколений. Проблема истории Нагорного Карабаха, Ереван, Айастан, 1990.
3. Манасян А., Карабахский конфликт. Ракурсы правового подхода, Ереван 1997.
4. Сумгаит… геноцид… Гласность? Ереван, 1989, 1990.
5. Нагорный Карабах и вокруг него. Глазами независимых наблюдателей, сост. С.Т. Золян, Г.К. Мирзоян, Ереван, Луйс, 1991.
6. Нагорный Карабах в 1918-1923гг. Сборник документов и материалов, отв. Ред. В. А. Микаелян, Ереван, 1992.
7. Чобанян С., Государственная и национальная политика Азербайджана, Ереван, Юридическая литература, 1993.
8. Чобанян С. С., Государственно-организованный терроризм, Айастан, 1992.
9. Бальян Грайр, Нагорный Карабах. Рабочий документ, представленный в комиссию по правам человека экономического и социального совета ООН, Ереван, 1994.
10. Мелик-Шахназарян Л., Военные преступления Азербайджана против мирного населения Нагорно-Карабахской республики, Ереван, Наири, 1997.
11. Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988.
12. Мосесова Ирина, Армяне в Баку: Бытие и исход, Ереван, Айастан, 1998.
13. Мосесова Ирина, Овнанян А., Вандализм в Баку, Ереван, 1996.
14. Demoyan Hayk, Levon Melik-Shahnazaryan, Khodjalu Case: A Special Dossier, Yerevan, 2004.
15. Hovhannisyan Nikolay, The Karabakh Problem. The Thorny Road to Freedom and Independence, Yerevan, Zangak-97, Yerevan 2004.
16. Демоян Г., Этническая принадлежность в политическом и общественном дискурсе современного Азербайджана, Баку, 2004.
17. Демоян Г., Мелик-Шахназарян Л., Ходжалинское дело: особая папка, Ереван, 2003.
18. Avakian Shahen, Nagorno-Karabakh; Legal Aspects, Yerevan, 2005.
19. Demoyan Hayk, The Islamic Mercenaries in the Karabakh War: the Way International terrorist Network Penetrated Azerbaijan, Yerevan, 2004.
20. The Karabagh File: Documents and Facts on the Region of Mountainous Karabagh, 1918-1988, Zoryan Institute, Cambridge, MA: 1988.Shahmuratian Samvel (Editor), Jones Steven (Translator), The Sumgait Tragedy: Pogroms Against Armenians in Soviet Azerbaijan: Eyewitness Accounts Cambridge, MA: Zor-

yan Institute, 1990.
21. Thomas De Waal Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War, New York University Press, New York and London, 2003.
22. Chrostopher J. Walker (Editor), Armenia and Karabagh: the Struggle for Unity London: Minority Rights Group Reports, 1991.
23. Caroline Cox, Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh, Institute for Religious Minorities in The Islamic World, London, 1993.
24. Leonidas Th. Chrysanthopoulos, Caucasus Chronicles: Nation-Building and Diplomacy in Armenia, 1993-1994, Princeton, NJ: Gomidas Institute, 2002.
25. Shahen Mkrtchian, Treasures of Artsakh, Yerevan: Tigran Mets Publishing House, 2002.
26. Donald E. Miller (Editor), Armenia: Portraits of Survival and Hope, CA: University Of California Press, 2003.
27. Levon Chorbajian (Editor), The Caucasian Knot: The History and Geopolitics of Nagorno-Karabagh (Politics in Contemporary Asia) London & NJ: Zed Books, 1994.
28. Mark Malkasian, Gha-Ra-Bagh: the Emergence of the National Democratic Movement in Armenia, Detroit, MI, Wayne State University Press, 1996.
29. George A. Bournoutian, A History of Qarabagh: an Annotated Translation of Mirza Jamal Javanshir Qarabaghi's Tarikh-E Qarabagh, Costa Mesa, CA: Mazda Publishers, 1994.
30. Shahen Mkrtchian, Shors Davtian Shushi: the City of Tragic Fate Yerevan: Amaras, 1999.
31. Levon Chorbajian (Editor), The Making of Nagorno-Karabagh: from Secession to Republic, NY: Palgrave Macmillan, 2001.